

# Մ Ա Ր Ջ Ի Կ

ԲՍԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهيرة  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

37-ԲԴ ՏԱՐԻ, 2018, ԹԻՒ 409

VOL. XXXVII N° 409

السنة السابعة والثلاثون - عدد رقم ٤٠٩

## 100-ԱՄԵԱԿԻ ՋԱՆԱՎԱՌՈՒԹԻՒՆ





Photo by Markar

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍՈՎ ՄԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ՝**

## **Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՇԱՆՈՒԵՐՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԿԱՌՏԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ ԹՈՒԱՅՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԱՄԲՈՂՋԱՑՈՒՄ**

**Մ**արտի 100-ամեակի տոնակատարություններու սեմին, Հինգշաբթի, 8 Մարտի երեկոյեան կազմակերպուած մամլոյ ասուլիսով մը, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը յայտարարեց Հ.Մ.Ը.Մ.Ի յուշանուէրներու առցանց վաճառքին մեկնարկը եւ պատմութեան ու սկաւտական գիրքերու թուայնացման աշխատանքներուն ամբողջացումը:

Մամլոյ ասուլիսը տեղի ունեցաւ «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Հրայր Մարտիւսեան» ժողովարահին մէջ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վաչէ Նաճարեանի եւ Իշխան Շղիայեանի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, մասնաճիւղերու վարչութիւններու եւ մամլոյ ու լատենտղական միջոցներու ներկայացուցիչներու:

Այս առիթով, եղբ. Աւօ Մուշոյլեան ընդհանուր տեղե-

կութիւններ տուաւ Հ.Մ.Ը.Մ.Ի յուշանուէրներու առցանց վաճառքի (online store) կայքէջին մասին (<http://homenetmen.store>), որուն շնորհիւ աշխարհի որեւէ երկիրէն կարելի է դիւրութեամբ գնումներ կատարել:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան ներկայացուց վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Բիւզանդ Թորիկեանի Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան չորս հատորներու եւ սկաւտական եօթը գիրքերու թուայնացման աշխատանքը եւ նշեց, որ յիշեալ բոլոր գիրքերը կարելի է ներբեռնել եւ կարդալ՝ այցելելով հետեւեալ կայքէջերը.

<https://www.homenetmen.org/hy/history-of-homenetmen-book> եւ՝

<https://www.homenetmen.org/hy/scout-books>

(Շար.ը տեսնել Գ. Կողբ)

## **ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ ՀԵՏ**

**21** Մարտ 2018-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Պէյրութի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի հետ, միութեան 100-ամեակի պաշտօնական տօնակատարութեան հրաւերը փոխանցելով անոր:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Արցախի Հանրապետութիւն-Հ.Մ.Ը.Մ. գործակցութեան կարելիութիւնները:



# ՄԱՐԶԻԿ

ԲԱՇԸՍ

37րդ Տարի, Թի 409, 40 էջ, Սեպ 5000 Լ.Ո.

Հրատարակողն է ՀԱՄԱՐԱՊԵՏԱՆԻ ՍԵՎԱՆԻՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՅԻՄ 2018-ԻՆ:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**  
«Սերունդներ դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից...» **2-3**

**Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակ**  
Ջահավառուքին մամլոյ ասուլիս **4-9**  
Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակ **Բ. Գ. կողքեր**

**ԻՐԱԳՈՐԾՈՒՄ** **10-15**

**ՍԱՍՆԱԾԻՂԷ ՍԱՍՆԱԾԻՂ** **16-37**

**ՄԵՐ ԿՈՐՈՒՄՆԵՐԸ** **38-40**



**«ՄԱՐԶԻԿ»Ի  
ՅԱԶՈՐԳ ԹԻՒՈՎ**

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի  
պատերազմի տղոց ներկա-  
յացուցչական խումբին  
պատմական իրագործումը:



Marzig sports magazine is published  
by Homenetmen Central Committee-  
Sevan Building, Rue 77, Sector 4,  
Bourj Hammoud, Beirut, Lebanon.  
Tel: 961 1 248043, 961 1 260117,  
E-mail: marzig@Homenetmen.org,  
P.O.Box: 80486 Bourj Hammoud,  
Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգեն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մարո Քէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիլվա Սաղրեան, Յարութ Ալամանեան, Նազօ Հալիպեան, Ռիբա Օդուկեան, Արլին Շամմասեան:

**Էջադրում եւ ընդհանուր շեշտադրում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստում:** Y Concept International, **Գրաշար-  
րութիւն:** Շողիկ Պոյաճեան, **Տպագրութեան պատրաստում:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի  
«Վահէ Մէքեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Բաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան  
սակ ձեռքում է՝ Լիբանան 20 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբա-  
նանի մէջ թերթին հատարման սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»-ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ  
ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրանալ նաեւ «Համազգային»-ի գրասենտրին: Լիբանանէն դուրս թերթը կը  
սրացուի «Liban post»-ի միջոցով:

«Մարզիկ» ամսաթերթ կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Մեան» շէնք, թի 77 փողոց, թի 4 հատում, Պորժ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org 80486 Պորժ Համուտ, Լիբանան  
Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

# «ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԴՈՒՔ ՁԵԶ ՃԱՆԱԳԷՔ ՍԱՐԴԱՐԱԴՊԱՏԻՑ...»

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

**28** Մայիս 2018 թուականը կը նշէ Հայաստանի անկախութեան 100-ամեակը: 100 տարի առաջ,

Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսի մէջ «ամէն բան նորից սկսուեց, երբ ամէն բան պիտի վերջանար այնտեղ»:

600 տարուան զոհանքէ եւ անարգանքէ ետք, 28 Մայիս 1918-ին հայ ժողովուրդը ինքնահաստատումի, ինքնակերտումի եւ վերապրումի իր կամքով աշխարհին ներկայացաւ իբրեւ ինքնուրոյն պետութիւն:

«Ընդ հուր» եւ «ընդ սուր» ծնած Հայաստանի Հանրապետութիւնը շրջադարձ մը արձանագրեց հայ ժողովուրդի հոգեբանութեան եւ քաղաքական գիտակցութեան մէջ: Դարերու օտար լուծը այլափոխած էր հայ մարդը, զայն պարպած էր իր մարդկային էութենէն եւ վերածած անջող, անկամ ու անդիմազիծ էակի: Մայիս 28-ը կերտեց զաղափարապաշտ, յանճառու եւ իր իրաւունքներուն տէր կանգնող նոր մարդը, հայ մարդը, որ այստեւտեւ դարձաւ հայկական պետութեան քաղաքացի:

Մայիս 28-էն առաջ հայութիւնը կը հաշուէր առանձին հատուածներ, հայեր, բայց ո՛չ հայութիւն: Մայիս 28-ը կերտեց հայութիւնը, իբրեւ ազգային մէկ միասոր, մէկ ուժ, մէկ կամք, որուն զուակները խիզախութիւնը ունեցան իրենց բոլր արեամբ սրբազրելու «աւազակապետներու կողմէ գծուած սահմանները»:

1918-էն առաջ կային Մասունը, Կարսն ու Վանը, սակայն չկար Հայաստանը: Վերջին անգամ 1045-ին երեւցած էր ան ազգերու քաղաքական քարտէսին մէջ: Մայիս 28-ը պատմութեան փոշիներէն հանեց եւ իբրեւ յանրապետական հայութեան յանրապետական հայրենիք՝ զայն կոթողեց իր ներկայ սահմաններով, իբրեւ պատուար ցցելով համաթրքութեան երազին իրականացման դէմ:

Հայկական պետութեան հետ ծնաւ նաեւ հայկական բանակը: Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսի հերոսամարտերուն հայութիւնը առաջին անգամ ըլլալով իր թշնամիին դէմ հանեց ո՛չ թէ ֆետայական խումբեր կամ ինքնապաշտպանութեան ջոկատներ, այլ՝ կանոնաւոր բանակ, Դանիէլ Բէկ Փիրումեանի, Դրաստամատ Կանայեանի հրամանատարութեամբ եւ զօրավար Մովսէս Միլիկեանի ընդհանուր ղեկավարութեամբ:



Մայիս 28-ով նուիրագործուած անկախութիւնը սերտօրէն շաղկապուած է հայ մարդուն վարդաւան ընելիքին, որովհետեւ ան թանկագին ժառանգ մը ձգած է անոր՝ ո՛չ միայն հայրենիքին ու իր ուսնակոխուած իրաւունքներուն պաշտպանութեան պարտականութիւնը, այլ նաեւ՝ Մայիս 28-ը կերտած սերունդին զաղափարական ու բարոյական կերպարը, իբրեւ օրինակ եւ ուղեցոյց:

Արդարեւ, 1918-ի պատմական օրհասական օրերուն հրապարակ եկաւ իր ժողովուրդին ճակատագիրին պատասխանատու, գիտակցութեան եւ գոհաբերութեան բարձր ոգիի տէր ազգային ղեկավարութիւն մը, որ յանճառու եղաւ լքելու Թիֆլիսի նման բարեկարգ հարուստ ոստան մը՝ երթալ-հաստատելու համար այդ օրերուն երկրորդական գիղաքաղաք մը՝ Երեւանը, ուր սով, համաճարակ եւ անապահովութիւն կը տիրէր:

Քաջագունիներու, Խատիսեաններու, Օհանջանեաններու եւ Վրացեաններու այդ սերունդը հայ ժողովուրդին տուաւ իր սեփական ուժերուն հաւատարմութիւնը եւ ապաւինելու քաղաքական հասունութիւն, իրեն հանդէպ գործուած պատմական անարդարութիւնները սրբազրելու կամք եւ ամուր պետութիւն կերտելու վճռականութիւն, ապագայ սերունդներուն փոխանցելով խորիմաստ ճշմարտութիւն մը, թէ՛ պետականօրէն լաւ կազմակերպուած ժողովուրդներն են միայն, որոնք ի վիճակի են ապահովելու իրենց խաղաղ զարգացումը, տնտեսական վերելքը եւ ազգային շահերուն հետեւողական պաշտպանութիւնը:

Ու եթէ այսօրուան Հայաստանին խնայուած է դրացի հանրապետութիւններուն նման՝ ներքին զինեալ հակամարտութիւններով մաշումն ու ջլատումը, ապա այդ եւս բարենիշ մըն է 1918-ի ազգային ղեկավարութեան՝ Արամներուն, Ռուրէններուն եւ Նժդեհներուն, որոնք զիտցան թրքական պալարը ինչպէ՛ս հեռացնել Երեւանէն, Արագածի փէշերէն ու Միւնիքէն:

Մայիս 28-ով կերտուած Հայաստանի Հանրապետութիւնը շատ դասեր ունի տալիք այսօրուան հայ մարդուն: Այդ դասերէն մէկն ալ, հաւանաբար, Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններուն կարճատեւ, բայց արդիւնա-



ւետ փորձառութիւնն է: 1918-ին, իր պետականութեան հանդէպ հայ ժողովուրդի մեծ մասին անվստահութիւնը փարատեցաւ եւ արեւմտահայ ժողովուրդը, իր ղեկավարութեամբ, անկախութեան յաջողոգող ամիսներուն տուաւ վստահութեան բազմաթիւ ապացոյցներ, Հայաստանի Հանրապետութիւնը նկատելով ապագայ միացեալ Հայաստանի կորիզը:

Ճիշդ է, 1918-ի Հանրապետութիւնը ունեցաւ միայն երկուքուկէս տարուան կեանք, բայց պատմական երեւոյթները իրենց տեսողութեամբ չէ որ կը կշռուին, այլ՝ իրենց ներդրումովը ժողովուրդի մը կեանքին մէջ, ազգային եւ համամարդկային տարողութիւններով: Իսկ ո՞վ կրնայ ուրանալ, որ առանց Մայիս 28-ի ազգային մեր իրականութիւնը այսօր տարբեր պիտի ըլլար, շատ անլի

բացասական եւ դժբախտ բովանդակութեամբ:

Ինչ որ Հայաստանի մէջ կատարուեցաւ անկախութեան երկուքուկէս տարիներու ընթացքին, քաղաքական, զինուորական, կրթական, ընկերային, մշակութային, տնտեսական թէ առողջապահական մարզերու մէջ, կ'ենթադրէ հրաշքի համազօր հաւաքական ճիգ մը, որ պատի՛ր միայն կը բերէ 21 Մեպտեմբեր 1991-ի անկախութեամբ իր պետականութեան վերատիրացած եւ 23 Ապրիլ 2018-ի ժողովրդային շարժումով իր արժանապատրուութիւնը վերականգնած հայ մարդուն, ազգային ու համամարդկային բարձր արժէքներու նժարի առջեւ դնելով իր զուակներուն կեանքը, միտքն ու գործը՝ ազատ, արդար, ժողովրդավար եւ միացեալ Հայաստանի մը կերտման ի խնդիր:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 110 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՒՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մարաթիա, Չէլթուն, Կոմիտաս, Էրեբունի, Արովեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաշի, Էջմիածին, Մարտունի, Կիւմրի, Վեյրի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չախլէ, Թրիփոլի, Պուրճ Համուր, Այնճար, Ճիւնի, Անթիլիաս, Շարէյրէ, Պաուլիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Գամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Էեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղդադ, Մուսուլ. **Քուէթ:** Ըուէթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոքինիա, Մելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմեյո, Ալքմար, Մոնիտմ. **Գերմանիա:** Մյունխի, Շուէպ: **Սրբոհով, Վեստերոս, Սուրերթելիա. Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատ:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Մէնք Գաքթիկ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելէս, Սան Ֆրանսիսկօ, Ֆրէզնօ, Մոնթեպելլօ, Փասադինա, Կլէմպէյ, Օրէնճ Զաունթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէգօ, Ինլընդ Էմիլիայ, Սանթա Գաբրա, Զրեւեթա Հովիտ, Պրոպէր, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ, Սանթա Էլարիթա. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքզի, Շիքալօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթօ, Փրովիդենս, Ֆրորիդա, Ալաբամա, Մարիլէն, Շարլոթ, Մերիլէնք Հովիտ. **Հարաւային Ամերիկա:** Պուէրթօ Արթու, Գորդուպա, Սոնթեփիլիտօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արաքս»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուռն.



ՄԻՆՉ ԵՐՐՈՐԴ ԶԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆԴԼԵԱՆԻ ՊՈԼՍՈՅ ՇԻՐԻՄԷՆ

# Հ.Մ.Ը.Մ.Ի 100-Ի ԶԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆ՝ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄԱՏՈՒՌԷՆ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՓԱՐԻՉԻ ՇԻՐԻՄԷՆ

**22** Ապրիլին, Պէյրուքի եւ Փարիզի մէջ պաշտօնական ազդանշանը փրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի հանդիսաւոր րօնակապարտութիւններուն, երբ գրեթէ միաժամանակ, Անրիլիասի եւ Փարիզի մէջ րեղի ունեցաւ ջահավառութիւն:

Առաջին ջահը, ի յիշարակ միութեան հիմնադիր Շաւարշ Բրիսեանի, վառեցաւ Եղեռնի նահապակաց յուշարձան մաքրուէն, Անրիլիասի մէջ, օրհնութեան խօսքով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին: Մինչ երկրորդ ջահը վառեցաւ միութեան հիմնադիր երրորդութեան անդամ Գրիգոր Յակոբեանի շիրիմէն, Փարիզ, Թիէի զերեզմանաբլուրին:

Յառաջիկայ օրերուն, երրորդ ջահ մըն ալ պիտի վառի միութեան հիմնադիրներէն Յովհաննէս Հինդլեանի շիրիմէն, Պոլիս: Ամբաս, երեք ջահերը եւ երեք քաղաքներէն բերուած մէկական ափ հող պիտի փոխադրուին Հայաստան եւ միախառնուին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի անմատ կրակին ու հողին:





**ՋԱՀԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ...**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքին մէջ, Ջահավառութիւնը տեղի ունեցաւ 22 Ապրիլի կէսօրուան ժամը 12-ին, յաւարտ Ս. Պատարագի: Ջահավառութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկստուածորհուրդի կազմեր, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մասնաճիւղերու վարչութիւններ, սկստուական շարքեր եւ մեծաթիւ ծնողներ:

Նախ, Հ.Մ.Ը.Մ-ի չեփորախումբին առաջնորդութեամբ, րսկստական շարքերը տպաւորիչ տողանցքով մուտք գործեցին մայրավանքի շրջափակ եւ իրենց տեղերը գրաւեցին Եղեռնի նահատակաց յուշարձան մատրան շուրջ:

Հնչեցին Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները, որմէ ետք տեղի ունեցաւ յիշատակի ծաղկեպսակի գետեղում մեր մէկուկէս միլիոն սրբացեալ նահատակներու յիշատակին: Ապա, կաթողիկոսութեան երեք միաբան հայրեր աղօթք մատուցեցին նահատակներու հոգիներու խաղաղութեան համար:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Հայկ Թապազեան: Ան անդրադարձաւ հայ կեանքին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ունեցած մեծ դերակատարութեան, յատկապէս՝ սերունդներու պատրաստութեան գործին մէջ, ֆիզիքապէս տուկուն, հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ կերտելու աշխատանքին մէջ:

Թապազեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի կառույցը հիմնուած է 1924-ին: Միութիւնը անցնող 94 տարիներուն իր



սկստուներով, մարզիկներով եւ անդամներով սերունդներ դաստիարակած է եւ մղիչ ուժը հանդիսացած է Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհատարած բոլոր շարքերուն:

Թապազեան նշեց, որ հակառակ 100-ամեայ տարիքին, Հ.Մ.Ը.Մ-ի բեղուն եւ կենսունակ գործունէութեամբ կը մնայ աւելի քան երիտասարդ ու կանգուն՝ շարունակելով իր թեւերը տարածել երկրագունդի բոլոր ցամաքամասերուն վրայ՝ հարիւրէ աւելի մասնաճիւղերով:

«Հ.Մ.Ը.Մ-ը մարզական միութիւն չէ միայն, այլ՝ ազգային դպրոց մըն է, որ կը սորվեցնէ զոհողութեան ոգի, եղբայրական սէր եւ բարոյական դաստիարակութիւն: Հազարաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներ հաւատարիմ մնալով «Բարձրացի՛ր-բարձ-





րացուր» նշանաբանին, վկայուեցան մարմնակրթական այս կառույցին եւ ջահը փոխանցեցին սերունդէ սերունդ: Զուգադիպուեցին չէ, որ այսօր, միութեան 100-ամեակին առիթով, երեք ջահերէն մէկը պիտի փոխադրուի Լիբանանէն եւ միանայ Ծիծեռնակաբերդի անմար կրակին: Հ.Մ.Ը.Մ. Լիբանան է՛ր ու տակաւին կը մնայ գլխաւոր բազկերակը մեր միութեան», հաստատեց եղբ. Թապագեան՝ վերանորոգելով միութեան նպատակներուն հաւատարիմ մնալու եւ սերնդակերտումի աշխատանքը շարունակելու յանձնառուութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ խորհրդանշական նկատեց Անթիլիասի մայրավանքի Ապրիլեան յուշարձանին շուրջ եղած համախմբումը, որովհետեւ Հայոց Յեղասպանութեան նահատակներուն այնտեղ ամփոփուած անշիրիմ ոսկորները վկան են այն մեծ ցաւին ու ոճիրին, որուն զոհ գնաց Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան ռահվիրայ Շաւարշ Քրիսեան:

«Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը այս պահուս, ջահավառութեան այս արարողութեամբ, աշխարհասփիւռ իր միութենականներուն անունով կը խոնարհի իր հիմնադիրներու յիշատակին դիմաց, եւ հանդիսաւոր այս պահուն, սրբազան այս վայրէն կը հաստատէ, որ ինք հաւատարիմ կը մնայ 100 տարի առաջ Քրիսեանի նահատակութեամբ իրեն փոխանցուած կտակին: Հայութեան ծառայելու, հայօրէն ապրելու եւ հայօրէն գործելու կտակին: Նորահաս սերունդները դաստիարակելու, մարմնակրթութեան ճամբով երիտասարդութիւնը համախմբելու, կրթելու եւ դաստիարակելու կտակին», հաստատեց եղբ. Մկրտիչեան:

Իր խօսքին մէջ, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ այս ջահավառութեան պահուն Փարիզի մէջ կը վառի այլ ջահ մը՝

միութեան հիմնադիր անդամներէն, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուսպետ Գրիգոր Յակոբեանի շիրիմէն, իսկ յառաջիկայ օրերուն նմանօրինակ արարողութեամբ Պոլսոյ մէջ պիտի վառի երրորդ ջահ մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր երրորդութեանէն Յովհաննէս Հինդլեանի շիրիմէն: Ան նշեց, որ միութեան երեք հիմնադիրներու շիրիմներէն պիտի առնուի մէկական ափ հող 20 Յուլիսին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մէջ հայրենի հողին խառնելու համար, իսկ ջահերը պիտի միանան Ծիծեռնակաբերդի անմար կրակին՝ յիշատակելու համար միութեան հիմնադիրները՝ իրենց պատմական աւանդով եւ 100-ամեայ խորհուրդով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը դիտել տուաւ, որ 2018 տարին յատկանշական է Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին զուգադիպութեամբ: «Մորքին մէջ կարելի չէ անջատել մէկը միւսէն, որովհետեւ 70 տարի, երբ չունէինք ազատ ու անկախ Հայաստան, Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի տարածքին տունեց Հայաստանի անկախութեան տարեդարձը, կամաւոր բանակի







Photo by Markar



չարքերով տողանցելով դաշտերու մէջ, միշտ մեր հողիններուն մէջ վառ պահելով անկախութեան գաղափարը, Եռագոյն դրօշը եւ հանրապետութեան զինանշանը: Այսօր հրձուանքով կը նայինք, որ մեր երկիրը անկախ է եւ մեր քաղաքի բանակը կը տողանցէ Մայիս 28-ին, հայրենի հողին վրայ, իսկ մենք՝ Յուլիս ամսուն 21-ին պիտի տողանցենք նո՛յն կշռոյթով, նո՛յն տեսլականով, «Կամաւոր բանակ»ի խոստումով, մինչեւ մեր բոլորին երազին մարմնաւորումը՝ մինչեւ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի մէջ համա-Հ.Մ.-Լ.Մ.ական փառաւոր տողանցքներու իրականացումը», ըստ ան:

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան սկառստներէն խնդրեց իրենց աջ ձեռքերը բարձրացնելով ուխտել միշտ հաւատարիմ մնալ Հ.Մ.-Լ.Մ.ի նպատակներուն, անկախ հայրենիքի պետականութեան, անոր դրօշին, զինանշանին եւ հօր բանակին. Նահատակաց մատրան առջեւէն ուխտել՝ ամբողջ աշխարհին յիշեցնել, որ մենք հաւատաւոր ժառանգորդներն ենք Մեծ Եղեռնի սերունդին եւ ուխտեալ զինուորը մեր նահատակներու արդար դատին, նաեւ ուխտել մեր բոլոր ուժե-

րով պայքարիլ՝ ապահովելու համար Հայոց Յեղասպանութեան ամբողջական ճանաչումը եւ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն ձեռքբերումը:

Այնուհետեւ, յուշարձան մատրան անմառ կրակէն հանդիսաւոր կերպով վառեցաւ 100-ամեակի ջահը, որմէ ետք ալ մը հող գետեղուեցաւ յատուկ արկղի մը մէջ՝ ջահն ու հողը աւելի ուշ Հայաստան փոխադրելու համար:

Ձահավառութիւնը իր աւարտին հասաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին պատգամով:

Արամ Ա. ողջունեց Հ.Մ.-Լ.Մ.ի մեծ ընտանիքը՝ Լիբանանէն մինչեւ Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Ան հաստատեց, որ 100 տարիներու ընթացքին Հ.Մ.-Լ.Մ.ը մեր ժողովուրդի կեանքին մայր էջին վրայ դարձաւ ներկայութիւն՝ ծառայութեամբ, գոհողութեամբ, նուիրումով եւ աշխատանքով լեցուն, կամաւոր բանակ: «Հայրենիքը, յատկապէս ազատ, անկախ Հայաստանը, հայ եկեղեցին, մեր ազգային պահանջատիրութիւնը, մեր ժողովուրդին գերագոյն արժէքները՝ հոգեւոր, մշակութային, ազգային, մեր ժողովուրդի հարազատ աւանդութիւնները ամբօրէն շղթայութեան Հ.Մ.-Լ.Մ.ի կեանքին ու գործին հետ», հաստատեց Արամ Ա.՝ աւելցնելով, որ 100 տարի ետք Հ.Մ.-Լ.Մ. իրաւունքն ու պատիւը ունի ուրախութեամբ եւ հպարտութեամբ նշելու իր 100 տարիներու ծառայական կեանքը՝ մեր ժողովուրդին ի սպաս:



Photo by Markar

Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ այս առիթով կատարուած ուխտին, յատկապէս վայրին՝ շեշտելով մէկուկէս միլիոն նահատակներու ողբէն ներկայութիւնը: «Իմ սպասումս է, որ ձեր կատարած ուխտին գիտակցութիւնը միշտ կենդանի ներկայութիւն մնայ, յուշարար՝ ձեր կեանքին մէջ, որպէսզի Հ.Մ.-Լ.Մ.ը ամէն տեղ՝ Հայաստանէն մինչեւ Արցախ, Լիբանան եւ ի սփիւռս աշխարհի, վերանորոգ նուիրումով եւ յանձնա-



ուղիթեամբ շարունակէ իր կեանքն ու երթը. ձեր երգին բառերով՝ «Յառա՛ջ նահատակ» դարձած՝ քայեցէ՛ք դէպի մեր ժողովուրդին յաղթանակը: Յատկապէս այս օրերուն, երբ մեր ժողովուրդը ամէնուրեք կը դիմագրաւէ լուրջ տագնապներ եւ մարտահրաւէրներ, առաւել քան երբեք մենք կարիքը ունինք մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, յատկապէս մեր երիտասարդներուն, համախմբուելու մեր գերագոյն արժէքներուն շուրջ՝ հայրենիք, եկեղեցի, ազգային պահանջատիրութիւն, հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներ: Ես վստահ եմ, որ այս գիտակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի շարունակէ իր յաղթական երթը եւ միութեան 100-ամեակը առիթ պիտի հանդիսանայ վերանորոգելու իր կեանքը, մանաւանդ նոր մղում տալու իր ազգային ծառայութեան», եզրափակեց Արամ Ա. Կաթողիկոս՝ Աստուծոյ աղօթելով, որ միշտ իր հովանիին տակ պահէ ու պահպանէ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը՝ զայն առաջնորդելով դէպի նորանոր իրագործումներ ու յաղթանակներ:

Ջահավառութիւնը աւարտեցաւ «Յառա՛ջ նահատակ» քայլերգով:

**... ԵՒ ՓԱՐԻՉԻ ՄԷՋ**

Անթրիաի մէջ կատարուած Ջահավառութեան զուգահեռ, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի վարչութեան կազմակերպութեամբ, նոյն օրը, նոյն ժամուն, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի Ջահավառութիւն մըն ալ տեղի ունեցաւ Փարիզի





Թիէի գերեզմանատան մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիր երրորդութենէն Գրիգոր Յակոբեանի շիրիմին վրայ: Զահավառութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Անդրանիկ Պահարեան, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Հրաչ Սիսեռեան եւ

Լեւոն Պաղտասարեան, Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ Վահան Եպս. Յովհաննէսեան, սկստական շարքեր եւ ծնողներ:

Զահավառութեան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Արամ Սիսեռեան:

Աւարտին, ներկաները երգեցին «Յա-

ռաջ նահատակ» քայլերգը:

Յաջորդեց Գրիգոր Յակոբեանի յիշատակին հոգեճաշ, ուր խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Սիսեռեան:

**Լիբանանի լուսանկարները՝ Մարգար Թումայեանի**

PINK  
*Kimberley*<sup>™</sup>  
AUSTRALIA

[PinkKimberley.com.au](http://PinkKimberley.com.au)

*Diamonds beyond rare*



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.

# «ԱՏՈՄ ԵՒ ՍԵԼԼԱ ԹՆՃՈՒԿԵԱՆ» ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԵՒ ՖՈՒԹՍԱԼԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՓԱԿ ԴԱՇՏԵՐՈՒ ԲԱՑՈՒՄ՝ «ԱՂԲԱԼԵԱՆ-Հ.Մ.Ը.Մ.» ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԷՉ

Թղթակից  
ԱՆԹԻԼԻԱՍ

Շաբաթ, 7 Ապրիլ 2018-ի երեկոյեան ժամը 7-ին, Անթիլիասի «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ յատուկ հանդիսութեամբ բացումը կատարուեցաւ «Ատոմ եւ Սեյլա Թնճուկեան» պասքեթպոլի եւ մինի ֆուլթպոլի փակ դաշտերուն, որոնց վերանորոգումը, սարքաւորումը, առաստաղով մը փակելն ու զանոնք իբրեւ մարզադաշտ յարդարելը սիրալոյսով կերպով ստանձնեցին Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի անդամներ՝ Ատոմ եւ Սեյլա Թնճուկեաններ:

Ծրագիրը իրականութիւն դարձաւ ջանքերով եւ հետեւողական աշխատանքով «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի տնօրէն խորհուրդին եւ բարոյական ու նիւթական աջակցութեամբ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին:

### ԲԱՑՈՒՄԸ

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղի ըսկառտներուն տողանցքով՝ առաջնորդութեամբ մասնաճիւղի շեփորախումբին, որմէ ետք կատարուեցաւ դրօշակի արարողութիւն: Հնչեցին Լիբանանի եւ



Photo by Markar

Հայաստանի քայքայները, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Իշխան Եղիայեանի եւ Բաֆֆի Կէփօղլանեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեանի եւ Շրջանային Վարչութեան անդամներու, Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղի ատենապետ եղբ. Կարօ Պէրպէրեանի եւ մասնաճիւղի վարչութեան անդամներու, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի, Կեդրոնական Կոմիտէի անդամներու, քաղաքական-ազգային մարմիններու անդամներու եւ հայ թէ՛ օտար հրաւիրեալներու: Հանդիսութեան պաշտօնական բաժինին բացումը



Photo by Markar



կատարեց եւ ձեռնարկը վարեց Հուրի Փափազեան-Էմմիեան, որ հրաւիրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններ Պետրոս Վրդ. Մանուէլեանը, Լեւոն Աբղ. Եղիայեանը եւ Արտաւազդ Աբղ. Շառուոյեանը՝ օրհնելու մարզադաշտը:

**ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԸ**

Առաջին խօսքը արտասանեց «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի տնօրէն Բաֆֆի Թիւթէլեան: Ան անդրադարձաւ բացման հանդիսութեան նախորդած վեց ամիսներու հետեւողական աշխատանքին, որուն մղիչ ուժը նման մարզադաշտ մը ունենալու կարեւորութիւնն էր, Թնճուկեան ամոլին բարերարութիւնը եւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնա-


կան Կոմիտէին նեցուկը:

Թիւթէլեան հաստատեց, որ աշխատանքը այդքան ալ դիւրին չէր, սակայն այն համոզումը, թէ այդ երդիքին տակ

հասակ պիտի առնեն հայեցի կազմաւորում ստացած սերունդներ, ի գործ դրուած ճիգերուն լաւագոյն արդարացումը հանդիսացաւ:



*Photo by Markan*



**ՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԷՆ  
ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԽՕՍՔԸ**

«Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի տնօրէն խորհուրդի անդամ Բաֆֆի Մեսրոպեան արաբերէնով արտասանած իր խօսքին մէջ՝ յանուն այս կառոյցներէն օգտուող իւրաքանչիւր անդամի ու անոր երգիքին տակ հարազատութիւն ապրելու կոչուած անհատի, շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք ներդրում ունեցան այս մարզադաշտերու ծրագիրին յաջողութեան: Ան դիտել տուաւ, որ տնօրէն խորհուրդը թէեւ միշտ ամէն ճիգ ի գործ կը դնէ ծառայելու իրեն դիմողներուն, սակայն նոր մարզադաշտերու կառուցումով կարելի պիտի ըլլայ կրկնապատկել գործունէութիւնը, աշխատանքի աւելի յարմար պայմաններ ընձեռել տարուան բոլոր եղանակներուն:

Բաֆֆի Մեսրոպեան հայերէնով եւս խօսք առաւ եւ հաստատեց, որ մեր հաւաքական կեանքին մէջ կատարուած իւրաքանչիւր նախաձեռնութիւն՝ նորահաս սերունդներու առողջ ու հայեցի դաստիարակութեան ծառայող, կը մընայ վաւերական արժէք, իսկ անոր բարերարութիւն կատարողները կը վայելեն իրերեքյաժող սերունդներու յարգանքն ու երախտագիտութիւնը եւ օրինակ կը դառնան նոր սերունդներուն՝ հաւաքական նպատակներու իրականացման նեցուկ ըլլալու: Ան անդրա-

դարձաւ յիշանանահայ իրականութեան մէջ «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին վճռորոշ դերակատարութեան, կենսական ու տիրական գործունէութեան՝ աւելցնելով, որ Հ.Մ.Ը.Մ-ի հարիւրաւոր մարզիկներուն, սկսողներուն, բազմահազար համակիրներուն, Հ.Յ.Դ. պատանեկան եւ երիտասարդական միութեանց անդամներուն համար սիրելի եւ հարազատ երգիք դարձաւ ան: Այդ պատճառով ալ Հ.Մ.Ը.Մ-ական Ատոմ եւ Սեւլա Թնճուկեանները իրենց հոգածութեան եւ ուշադրութեան առարկայ դարձուցին կեդրոնը՝ ինչպէս անցեալին, նաեւ այսօր: Ան իր խօսքը եզրափակելով դիտել տուաւ, որ կեդրոնը պիտի շարունակէ ըլլալ մարդու ժպտաբանութեան քուրայ՝ կերտելով այնպիսի սերունդներ, որոնք տէր պիտի կանգնին Հայ Դատին եւ պահանջատէր՝ հայութեան իրաւունքներուն:

**Հ.Մ.Ը.Մ-Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ  
ՄԱՄՆԱՃՅԻՂԻՆ ԽՕՍՔԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Կարօ Պէրպէրեան: Ան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց մասնաճիւղին 48 տարիներու բազմաճիւղ աշխատանքները՝ դիտել տալով, որ մասնաճիւղը վերջին տարիներուն յաւելեալ ածունեցաւ բոլոր բնագաւառներու մէջ՝ թէ՛ թիւի եւ թէ՛ որակի իմաստով: Ան յատուկ կերպով յիշեց մասնաճիւղին

աղջկանց պատքեթպոյլի խումբը, որ լիբանանեան եւ արաբական մակարդակներու վրայ մեծ նուաճումներ արձանագրեց: Այս բոլորին լոյսին տակ, եղբ. Պէրպէրեան անդրադարձաւ մասնաճիւղին աճող կարիքներուն, որոնց գոհացում տալու համար նման մարզադաշտերով օժտուիլը համազօր է երազի մը իրականացման, որպէսզի միութեանականները մնան իրենց հարազատ տան մէջ եւ չստիպուին այլընտրանքներու դիմելու, ըսաւ ան:

Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին անդրադառնալով, եղբ. Պէրպէրեան յայտնեց, որ չի բաւեր յիշել անցեալի իրագործումները, այլ պէտք է մտածել միութեան առաքելութեան շարունակութեան մասին՝ կերտելու առողջ, ծառայատէր, պատասխանատու, բարոյական բարձր արժանիքներու տէր ու տիպար հայ երիտասարդներ՝ նշելով, որ մասնաճիւղը ոչ մէկ ճիգ պիտի խնայէ նոր մարզադաշտերուն շնորհիւ յաւելեալ լիցք հաղորդելու Հ.Մ.Ը.Մ-ի գանազան խումբերու գործունէութեան:

Իր խօսքին վերջաւորութեան, եղբ. Պէրպէրեան Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղին անունով երախտագիտութեան յուշանուէր մը յանձնեց Ատոմ եւ Սեւլա Թնճուկեան ամուլին:

**ԹՆՃՈՒԿԵԱՆ  
ԱՄՈՒԼԻՆ ԽՕՍՔԸ**

Յաջորդ խօսք առնողը եղաւ եղբ.



Ատոմ թնճուկեան, որ մեծ երջանկութիւն նկատեց նման երազի մը իրականացումը, մանաւանդ եթէ մտաբերուի, որ հին սերունդները ինչպիսի՛ պայմաններու մէջ տարած են իրենց աշխատանքները, այն ատեն այսօրուան մարգարաշտերուն գոյութիւնը նախանձեղի պիտի նկատուի: Ան անդրադարձաւ կեդրոնի պատմականին: Ան յիշեց կեդրոնին հիմնարկէքը շեշտելով, որ օրին Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն խանդավառուեցաւ եւ փափաքեցաւ մարգամշակութային այս կառուցին մէջ ունենալ իր միակողմնաբար, եւ այսպիսով բոլորը միացան եւ իրականութիւն դարձուցին նման կարեւոր եւ իւրաքանչիւր համալիր մը:

Եղբ. Ատոմ թնճուկեան շնորհաւորեց տարուած յաղթանակներն ու արձանագրուած պատուաբեր նուաճումները, որոնք երիտասարդութեան մօտ խանդավառութիւն կը ստեղծեն եւ կը մղեն զանոնք միանալու այս միութեան: Ան ըսաւ, թէ իրենց երիտասարդութեան այլ Հ.Մ.Ը.Մ.ականներ բարձրացուցին զիրենք, իսկ այսօր իրենց կարգն է բարձրացնելու ուրիշները: Այս առիթով ան կոչ ուղղեց միանալու Հ.Մ.Ը.Մ.ին եւ Դաշնակցութեան ու անոնց ճամբով ծառայելու ազգին:

Ապա, խօսք առաւ քոյր Սելա թնճուկեան: Ան շնորհաւորեց այն ծնողները, որոնք իրենց զաւակները յանձնած են Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ այս միութեան

թիւնը դպրոց է, որմէ գրկուողը շատ բան կը կորսնցնէ: Ան նշեց, որ թերեւս անմիջական կերպով Հ.Մ.Ը.Մ.ին մէջ ըլլալու արժէքին գիտակցիլը դժուար է, բայց կեանքի ընթացքը ցոյց կու տայ, որ նման միութեան մը անդամը ըլլալը, մարգական եւ սկստական կեանքին ժառանգուած ոգին ու դաստիարակութիւնը հարստութեամբ չի գնուիր կամ այլ դպրոցներու մէջ չի փոխանցուիր: Ատոր լաւագոյն ապացոյցը այն է, որ Հ.Մ.Ը.Մ.ի իւրաքանչիւր կառույց Հ.Մ.Ը.Մ.ականին համար հարազատ տուն է, իսկ իւրաքանչիւր միութեանական՝ քոյր ու եղբայր:

**ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ՅԱԿՈՒՐ  
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՒԻ ԽՕՍԲԸ**

Աւարտին, խօսք առաւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի: Ան հպարտութիւն յայտնեց ի տես բանախօսներուն ետեւի աստիճաններուն վրայ նստած սկստաններուն ու մարգիկներուն՝ ըսելով. «Հաւատացէ՛ք, սիրելիներ, երբ այսպիսի սերունդ կանգնած է մեր կունակին, կը նշանակէ մեր ապագան շատ փայլուն է»: Ան անդրադարձաւ անցեալի պատասխանատուներու կատարած աշխատանքին, նպատակին ու հաւատքին՝ կերտել հրպարտ, ազատ եւ ինքնուրոյն հաւաքականութիւն: «1980-ական թուականներուն կարգ մը լուսամիտ հայրենակից-

ներ, պատասխանատու կուսակցականներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ Համագայինի անդամներ, անհատ, պարզ, համեստ հայրենակիցներ մտածեցին այս ժայռոտ շրջանը, որ հետագային բոլորին սիրելի Հրաչ Տասնապետեանին կողմէ Մարգարու կոչուեցաւ, վերածել հայկական նոր կեդրոնի մը, որ կարենար ունենալ հայօրէն շնչելու ամէն պայման, տուեալ, հայօրէն ապրելու ամէն միջոց: Հայր ո՛ւր այ երթա՛յ, առաջին գործը կ'ըլլայ դպրոց եւ ակումբ կառուցել՝ եկեղեցիէն ետք: Եկեղեցին կար, քիչ մը վար, անհրաժեշտ էր դպրոցը, որ կառուցուեցաւ, սակայն անհրաժեշտ էր սրտին երկրորդ կէսը՝ մարգամշակութային կեդրոնը, եւ ահա այսօր, իր հիմնարկէքէն ուղիղ 25 տարի ետք, մէկ օրուան տարբերութեամբ, մենք դարձեալ հաւաքուած ենք նոր յաւելում կատարելու՝ քայլ պահելու համար այն կարիքներուն հետ, զորս այս շրջանը ունի», յայտնեց Յակոբ Բագրատունի:

Ան աւելցուց, որ այսօրուան սերունդները պիտի ըլլան վաղուան ղեկավարները, որովհետեւ մեր կեանքը մեզի սորվեցուցած է պատասխանատուութեան, ջահի փոխանցում, ուսուցիչ, ձեռք-ձեռքի դէպի յառաջ երթալ: Ենթադրելով, որ մեր ակումբները միշտ այլ կոչուած են տուն, այսինքն՝ ընտանիք, հարազատ երգիք, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցի-



չը հպարտութիւն նկատեց ունենալ այնպիսի անձնակազմութիւններ, որոնք կը հաւատան, թէ նման կեդրոններով կ'ապրի ազգը, եւ ոչ թէ մակերեսային ու գնայուն արարքներով եւ կեցուածքներով, այլ՝ մեր կեանքին մէջ մնայուն ու հետեւողական ներկայութեամբ, մեր ժողովուրդին հետ ըլլալով առօրեայ դրութեամբ, անոր ցաւն ու տառապանքը ապրելով ամէն օր՝ հաստատելով, որ ժողովուրդը լաւապէս գիտէ զանազանի ու արժեւորել:

Յակոբ Բագրատունի ըսաւ, թէ Դաշնակցութիւնը սին խոստումներ չի տար, այլ անոր խոստումը իր կեանքն ու գործն է, նոյնն է պարագան կուսակցութեան ուղեկից միութիւններուն, որոնք կ'ապրին կենդանի գործով, ժողովուրդին հետ, անոր համար, որովհետեւ կը հաւատան, թէ առանց ժողովուրդին իրենց գոյութիւնը անիմաստ է, իսկ անոր սիրոյն տարուած հսկայական աշխատանք ու քրտինքի իւրաքանչիւր կաթիլ աղամանդ է, որ կը դրուի մեր ժողովուրդի տրամադրութեան տակ: «Այդ աղամանդներուն լաւագոյն օրինակը այս փոքրիկներն են, մեր գաւակներն են, որոնք անցեալէն եկած դէպի ապագայ կը նային՝ «Բարձրացիր՝ բարձրացուր» գոչելով»:

Աւարտին, Յակոբ Բագրատունի Հ.Յ.Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէին եւ Լիբանանի կազմակերպութեան մեծ ընտանիքին անունով շնոր-

հակարութիւն յայտնեց Ատոմ եւ Սեյլա Թնճուկեաններուն, որոնք պատահական բարերարներ չեն մեր կեանքին մէջ: «Դուք բարերարներ էք, որ կ'ապրիք ձեր բարերարութեամբ, կ'ապրեցնէք ձեզի հետ մեր կեանքը, առօրեան, կը նայիք այս երեխաներուն, կը յիշէք ձեր պատանեկան տարիները եւ դէպի ապագայ նայելով այս գաղութը՝ լիբանանահայութիւնը կ'ուզէք ոտքի պահել: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակի լաւագոյն նուէրը, առաջին նուէրը, Լիբանանէն, այս դաշտն է՝ «Ատոմ եւ Սեյլա Թնճուկեան» դաշտն է», հաստատեց Յակոբ Բագրատունի՝ աւելցնելով, որ լիբանանահայութիւնը պիտի շարունակէ մնալ Սփիւռքի հիմնական գաղութը, որ կը պատրաստէ այնպիսի մարդուժ, որ կը զօրացնէ Սփիւռքը, Հայաստանն ու Արցախը:

Իր խօսքը եզրափակելով, Յակոբ Բագրատունի հայութեան տրուած շքանշաններ նկատեց Ատոմ եւ Սեյլա Թնճուկեան ամուր:

Խօսքերէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի մարզական խումբերը՝ քոնկ ֆուտ, պասքեթպոլ, ֆութպոլ ու ճատրակ, ունեցաւ ցուցադրական ելոյթներ:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յաւազ նահատակ» քայլերգով:









Հ.Մ.Ը.Մ.Ի  
ՊԱՍՔԵԹՊՈԼԻ  
ԱՆԹԻԼԻԱՍԻ  
ԱՂՋԿԱՆՑ  
ԽՈՒՄՔԸ  
ԴԱՐՁԵԱԼ  
ԼԻԲԱՆԱՆԻ  
ԱԽՈՅԵԱՆ



2016, 2017, 2018. ԵՐԵՎ ՏԱՐԻ,



Հ.Մ.Ը.Մ.-էն եւ բաժակը վերադարձնել Մանարա, թէեւ ան յաջողեցաւ կէտ մը արձանագրել Հ.Մ.Ը.Մ.ի դէմ, երբ բաժակի մրցումներու կիսաւարտականին, 6 Մարտին, յետ-երկարաձգման, ան դուրս ձգեց Հ.Մ.Ը.Մ.ը՝ 88-83 արդիւնքով պարտութեան մատնելով զայն:

Ախոյեանութեան պարագային, Ռիատի չյաջողեցաւ հասնիլ նման յաջողութեան մը: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ. կիսաւարտականին իր դէմ ունեցաւ Հոսիսի խումբը եւ երեք հանգիստ յաղթանակներ արձանագրեց անոր դէմ՝ 82-42, 46-62 եւ 83-39 արդիւնքներով:

Հ.Մ.Ը.Մ.-Ռիատի աւարտական երեք ճակատումները տեղի ունեցան 21, 23 եւ 25 Մարտին: Առաջին մրցումին, Հ.Մ.Ը.Մ. իր դաշտին վրայ պասքեթպոլի լաւ դաս մը տուաւ մրցակիցին՝ 70-52 արդիւնքով պարտութեան մատնելով զայն: Երկրորդ մրցումին, հակառակ վերջին վեց վայրկեանը մէկ օտարականով խաղալուն, Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ 55-53 արդիւնքով դժուար, սակայն կարեւոր յաղթանակ մը արձանագրել: Ճակատագրական վերջին մրցումին, Հ.Մ.Ը.Մ. 83-46 արդիւնքով յաղթանակէ մը ետք՝ յաջողեցաւ երրորդ տարին ըլլալով տիրանալ Լիբանանի առաջնութեան տիտղոսին:

Մարզական այս յաջողութեան իրագործման մէջ իրենց կարեւոր բաժինը ունեցան խումբին մարզիկուհիները, մարզիչը, վարչական պատասխանատուները եւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի պասքեթպոլի ժրջան յանձնախումբը ու անոր կից գործող տիկնանց օժանդակ մարմինը:

**25** Մարտ 2018-ին կրկնուեցաւ 17 Մայիս 2017-ին եւ 4 Յունիս 2016-ին պարգուած յաղթանակի հոյակապ պատկերը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի պասքեթպոլի աղջկանց խումբը յաջողեցաւ տիրանալ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին եւ «Հ.Մ.Ը.Մ.-Աղբայեան» մարզամշակութային կեդրոնի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» դաշտին մէջ, բազմաճազար համակիրներու ներկայութեան, բարձրացուց առաջնութեան բաժակը:

Դիւրին չեղաւ տիտղոսին պահպանումը յաջորդաբար երրորդ տարին ըլլալով: Պայքարը բուռն եղաւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ռիատիի աղջկանց խումբերուն միջեւ: Ռիատի, սակայն, չյաջողեցաւ վերջին երկու տարիներու իր վրէժը լուծել

# ԵՐԵՔ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ



Լուսանկարները՝ Սագո երեցեանի



Կիսաւարտականի եւ աւարտականի մրցումներուն խումբէն փայլեցան յատկապէս օտարականներ Երենա Լուչենքա, Ճեսիքա Պրիլենտ եւ Ռեպեքա Աքրլ: Իրենց տպաւորիչ խաղարկութեամբ յաղթանակներու նուաճման մէջ կարեւոր ներդրում ունեցան Լէյլա Ֆարէս, Մեղրի Թորոսեան եւ խմբապետ Նաթալի Սվաճեան:

Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին նուաճումէն տասը օր ետք, 4 Ապրիլի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի պաս-

քեթպոլի աղջկանց խումբին մարզիկները, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Անթիլիասի մասնաճիւղի վարչութիւնը եւ մասնաճիւղի աղջկանց պասքեթպոլի յանձնախումբի ատենապետ քոյր Թային Խաչատուրեան այցելեցին «Շաղոյեան» կեդրոն, ուր հանդիպում մը ունեցան Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի հետ եւ անոր յանձնեցին յաղթանակի բաժակը:

Այս առիթով, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի դրուատեց տարուած յաղթանակը, բարձր գնահատեց Լիբանանի ախոյեան խումբին անխոնջ ու հետեւողական աշխատանքը՝ հաստատելով, որ նման նուաճում մը համայն լիբանանահայութեան համար հպարտալի ըլլալով՝ բարձր կը պահէ հայութեան անունը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՔԱՆԱԿՈՒՄԸ



## Թղթակից ԹՈՐՈՆԹՈ

**Զ**մեռ, Յունուարի ամիս, ձիւն, ցուրտ եւ բանակուծ: Այո՛, շատերու համար անկարելի բան է, բայց Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղին համար անկարելին կը դառնայ կարելի, երբ իր նուիրեալ Սկաուտական Խորհուրդի անդամներով, խմբապետական կազմով եւ 183 գայլիկ-արծուիկներով, արի-արենոյշներով եւ երէց-պարմանուհիներով ան կը դառնայ հաւաքական մէկ ուժ: Արդարեւ, 12-14 Յունուարի շաբաթավերջին, մասնաճիւղին սկաուտական ընդհանուր կազմը իր մասնակցութիւնը բերաւ ձմեռնային դպրոց-բանակումին «Camp Samac» բանակավայրին մէջ:

12 Յունուարի երեկոյեան, հայ երիտասարդական կեդրոնին մէջ տեղի ունեցաւ խումբերու հաւաքը՝ նախքան բանակավայր մեկնումը. երէց-պարմանուհիները ստանձնեցին գոյքերու, պաշտակներու եւ ուտելիքներու դասաւորումը փոխադրամիջոցներու մէջ:

Խումբերը բանակավայր հասան, ստանձնեցին իրենց տնակները եւ բանակումի բացման արարողութիւնը կատարեցին «Յառաջ նահատակ» քայլեր-

գով, որմէ ետք անոնք բաժնուեցան խմբակներու: Իւրաքանչիւր խմբակ կոչուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն մէկուն անունով:

Իւրաքանչիւր խմբակ ունեցաւ իրեն յատուկ յայտագիրը, որ ընդգրկեց ազգային եւ սկաուտական նիւթերով դասախօսութիւններ, երգեր, սկաուտական խաղեր, լուսարձակով պատրաստուած նիւթեր եւ ձեռագիր աշխատանքներ:

Յաջորդ առաւօտ, սկաուտները աշ-

խուժութեամբ սկաուտական իրենց մարզանքը կատարեցին: Նախաճաշէն ետք, գայլիկ-արծուիկները եւ արի-արենոյշները կատարեցին փողկապի տուճութեան արարողութիւն. գայլիկ-արծուիկները իրենց փոքր տարիքով, բայց բարձր գիտակցութեամբ վերանորոգեցին իրենց խոստումը, ինչպէս նաեւ կրկնեցին վճռակիր օրէնքը եւ արժանացան դեղին փողկապի: Աքելյան եւ մասնաճիւղին խմբապետը շնորհակարար-



ցին անդամները՝ անոնց մաղթելով յաջողութիւն եւ բարի ծառայութիւն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ: Արի-արեւոյշները, իրենց կարգին, վերանորոգեցին իրենց խոստումը եւ ստացան կապոյտ փողկապներ՝ խոստանալով որ յանձնառու պիտի ըլլան յաւելեալ պարտաւորութիւններու եւ պարտականութիւններու ստանձնման, ինչպէս նաեւ տէր պիտի ըլլան ամէն օր բարի գործ մը կատարելու իրենց խոստումին:

Չմրան եւ ձիւնի առիթը օգտագործելով, խումբերը պատրաստեցին սալ-

լակներ եւ իրարու հետ մրցելով հաճելի եւ ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին: Սկստումները նաեւ սորվեցան Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած քայլերգը: Յայտագիրները շարունակելով՝ հասած էր խարոյկին ժամը. ճիշդ էր, որ օդը քիչ մը ցուրտ էր, բայց այդ մէկը պատճառ չեղաւ որ խարուկահանդէս չկատարուի: Երէջ եւ պարմանուհի փաղանգները պատրաստեցին խարոյկը, որ սկսաւ կանչելով եւ շարունակուեցաւ ազգային երգերով ու գաւեշտով: Այդ բոլորը աւելի ջերմ եւ մտերմիկ մթնո-

լորտ ստեղծեց բանակողներուն միջեւ: Արդէն ճրագմարի ժամը հասած էր եւ սկստումները պէտք է պատրաստուէին յաջորդ օրուան:

Բանակումին փակման արարողութիւնը տեղի ունեցաւ «Ով հայ արի» քայլերգով:

Վերադարձի ժամը հասած էր. ըսկստումները ձեռք-ձեռքի բռնած «Ցտեսութիւն» երգը երգեցին. «Ցտեսութիւն մըն է եղբայր, միայն ցտեսութիւն, դարձեալ իրարու կը հանդիպինք ու կ'երգենք միաձայն»:

# Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՍԱՆ ՏԻԷԿՈՅԻ «ՍԵՒԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ՄԱՐԶԱԽԱԳԵՐԸ

## Թղթակից ՍԱՆ ՏԻԷԿՈ

**17**, 18 եւ 19 Փետրուարին, Հարաւային Քալիֆորնիոյ Սան Տիէկո քաղաքին մէջ մեծ խանդավառութեամբ կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «ՍԵՒԱՆ» մասնաճիւղին վոլիպոլի եւ պասքեթպոլի միջ-մասնաճիւղային մարզախաղերը, որոնք տեղի կ'ունենան 33 տարիէ ի վեր:

Մարզախաղերուն մասնակցեցան պասքեթպոլի 73 եւ վոլիպոլի 12 խումբեր, մօտաւորապէս 1000 մարզիկներով:

Տարեկան այս մարզախաղերը մեծ խանդավառութիւն կը ստեղծեն ո՛չ միայն մարզիկներու, այլեւ՝ ծնողներու եւ Սան Տիէկոյի փոքրաթիւ հայ համայնքին մօտ: Այս տարի, աւելի քան 2000 ծնողներ եւ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներ ներկայ եղան ու քաջալերեցին պատանի ու երիտասարդ մարզիկները՝ «մարզական խրախճանքի» մթնոլորտի մը մէջ:

Միջ-մասնաճիւղային այս խաղերը տեղի ունեցան «Alliant International»-ի մարզադաշտերուն վրայ: Մրցաշարքի աւարտին, հետեւեալ մասնաճիւղերու խումբերը գրաւեցին առաջին դիրքերը-

### ՏՂՈՑ ՊԱՍՔԵԹՊՈԼ

- 1. Ա դասակարգ՝ Կլենտէյի «Արարատ» մասնաճիւղ:



- 2. Ա դասակարգ՝ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ:

- 3. Ա դասակարգ՝ «Արարատ» մասնաճիւղ (3):

21-էն վար տարիք՝ «Արարատ» մասնաճիւղ:

18-էն վար տարիք՝ Լա Քրետենթայի «Շանթ» մասնաճիւղ:

16-էն վար տարիք՝ «Արարատ» մասնաճիւղ (1):

15-էն վար տարիք՝ «Արարատ» մասնաճիւղ (2):

### ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՊԱՍՔԵԹՊՈԼ ԵՒ ՎՈԼԻՊՈԼ

Ինչ կը վերաբերի աղջիկներու պասքեթպոլի մրցաշարքին, վերի դասակարգի մրցաշարքին ախոյեան հանդիսացաւ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղին կազմը, իսկ վարի դասակարգինը՝ դարձեալ նոյն մասնաճիւղին համապատասխան խումբը:


16 տարեկանէն վար դասակարգին մէջ ախոյեան հանդիսացաւ Կլենտէյի «Արարատ» մասնաճիւղին կազմը:

Վոլիպոլի խաղերուն, վերի դասակարգի ախոյեանութիւնը խլեց Սան Ֆրանսիսկո հովիտի «Մասիս» մասնաճիւղին խումբը, իսկ վարի դասակարգի պարագային՝ Լոս Անճելըսի մասնաճիւղին կազմը:



# Հ.Մ.Ը.Մ.Ի 100 Ձեռնարկներ


- \* Դրոշակի բացման արարողություն Միժեռնակաբերդի մէջ:
- \* Ջահավառություն եւ ծառատնկում Միժեռնակաբերդի մէջ:
- \* Ցուցահանդէս Միժեռնակաբերդի մէջ, նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի 100ամեակին:



- \* Եռարյուր այցելություն: Հոգեհանգստեան արարողություն:



- \* Հանրային պաշտօնական հանդիսություն Օփերայի դահլիճին մէջ:



- \* Հ.Մ.Ը.Մ.ի 100ամեակին նուիրուած նամականիշի մեկնարկ:
- \* Նախկին խմբապետներու հաւաք ու խարուկահանդէս - Բիրական:



- \* Հանրային Փակման նաշկերոյթ Փարաւոն նաշարանին մէջ:



# 100 ԱՄԵԱԿԻ ՄԻՆ 3ԱՅՏԱԳԻՐ



19



Յուրիս

\* Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11րդ բանակումի  
բացման հանդիսաւոր արարողութիւն  
Բիրականի մէջ:

\* 110 մասնահիւղերու անուններով  
Յուշաքանդակի բացում - Բիրական:

21



Յուրիս

\* Հիմնադիրներու քանդակներու  
բացում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոն:

\* Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11րդ բանակումի  
մասնակիցներուն կողմէ տողանց  
Հանրապետութեան հրապարակ:

23



Յուրիս

\* Վահան Զերազի արձանի  
բացում Կիւմրիի մէջ:

25



Յուրիս

\* Գիտաժողով նուիրուած  
Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան,  
կազմաւորման ու տարածման:

28



Յուրիս

\* Դրօշակի փակման արարողութիւն  
Ծիծեռնակաբերդի մէջ:

\* Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11րդ  
բանակումի պաշտօնական փակում  
Բիրականի մէջ:



# ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ «ՏԱՌԵՐՈՒ ԴՈՒՐԱԿ» ԵՒ ԲԱՇ ԱՊԱՐԱՆԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԽԻ

**18** Մարտին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Տիգրան Խոյիան» մասնաճիւղին ըսկառուտները այցելեցին Արագածոտնի մարզի «Տառերու պուրակ»ը, ապա մեկնեցան Բաշ Ապարանի հերոսամարտի յուշահամալիր, ազատագրական շարժման գործիչ Դրոյի շիրիմ, ուր անոնք ծանօթացան Դրոյի կեանքին, գործունէութեան եւ «Վերածնունդ» յուշահամալիրին:



Այս առիթով, եղբ. Արթիւրը արչաւի մասնակիցներուն ներկայացուց Մայիսեան հերոսամարտերու եւ Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան պատմութիւնը: Ծարունակելով իրենց ճանաչողական արչաւը, ըսկառուտները այցելեցին Ս. Խաչ եկեղեցի:

Արչաւին վերջնական հանգրուանը Սաղմոսավանքի վանական համալիրն էր, ուր եղբայր Սեւակը սկառուտներուն հետ զրուցեց սկառուտութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի մասին:



## ՀԱՄԱԵՐԵՒԱՆԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

**24** Մարտին տեղի ունեցաւ համաերեւանեան դայքիական գործունէութիւն, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Երեւանի «Գրիգոր Յակոբեան», «Յովհաննէս Հինդլեան» եւ «Վահան Չերազ» մասնաճիւղերուն:

Համաերեւանեան գործունէութեան նպատակն էր դայքիկները ծանօթացնել իրարու եւ ստեղծել ընկերական միջնորդութեամբ: Գայքիկները այցելեցին Հայաստանի Հանրապետութեան բնութեան թանգարան, որմէ ետք վոճմակներու միջեւ տեղի ունեցան դաշտային խաղեր:



## ԴԷՊԻ ԲՁՆԻ...

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի «Վահան Չերազ» մասնաճիւղի ըսկառուտները բացայայտեցին Բջնի քաղաքին գեղատեսիլ վայրերը եւ ամբողջ օր մը անցուցին բնութեան գիրկը:



## «ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՆԴԼԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

**Կ**իրակի, 11 Մարտին, «Աւան» համայնքին մէջ տեղի ունեցաւ «Յովհաննէս Հինդլեան» մասնաճիւղի նորաստեղծ խումբին առաջին գործունէութիւնը:

Գործունէութեան ընթացքին սկառուտները ծանօթացան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կառուցին, սորվեցան վրան լարել, ինչպէս նաեւ խաղացին սկառուտական բազմաթիւ խաղեր:





## Բ. ԿԱՐԳԻ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

**18** Մարտին, ինչպես միշտ, «Գրիգոր Յակոբեան» մասնաճիւղը եռուզեռի մէջ էր: Տեղի ունեցաւ արի-արենոյճներու Բ. Կարգի երկօրեայ սեմինար, որուն յաջորդեց նոյն կարգի քննութիւնը: Իսկ դայիկներն ու արժուիկները իրենց կիրակնօրեայ հերթական գործունէութիւնը ծաւայեցին ուրախ եւ աշխոյժ մթնոլորտի մէջ:



## 6 ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ

**Հ**ՄԼՄ-ՀԱՍԿ-ի Երեւանի մարզային վարչութեան կազմակերպութեամբ, 17 Մարտին տեղի ունեցաւ Երեւանի 6 մասնաճիւղերու վարչութիւններու եւ խմբապետներու սեմինար՝ ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի գրասենեակին մէջ:

Սեմինարին ներկայացուեցաւ ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի նոր կանոնադիրը, քննարկուեցան վարչութիւններու եւ խմբապետներու լիազօրութիւնները եւ իրաւասութիւնները:

Սեմինարը վարեցին ՀՄԼՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան եւ ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի գրասենեակի տնօրէն եղբ. Մանուկ Մանուկեան:

## ԾՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎ

**4** Մարտ 2018-ին, ՀՄԼՄ-ՀԱՍԿ-ի կենդրոնին մէջ տեղի ունեցաւ «Գրիգոր Յակոբեան» մասնաճիւղի վարչութեան առաջին ծնողական ժողովը:

Հանդիպումին ընթացքին, վարչութեան անդամներն ու ծնողները ծանօթացան իրարու, ստեղծուեցաւ Ծնողական խորհուրդ, փոխանակուեցան միտքեր եւ առաջարկներ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՌՈՒՄԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՅԵՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

## Սուսաննա Յովհաննիսեան ՄՈՍԿՈՒԿԱ

**Հ**այ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Մոսկուայի մասնաճիւղում, «Իէպի Արարատ» կազմակերպութեան տանիքի ներքոյ, տեղի ունեցաւ քառօրեայ սկաուտական սեմինար-բանակում: Սեմինարի նպատակն էր պատրաստել ապագայ սկաուտ պատասխանատուներ-առաջնորդներ՝ ովքեր ձեռք կը բերեն սկաուտական Ա. եւ Բ. Կարգի գիտելիքներ ու հմտութիւններ: Սեմինարը յաւուր պատշաճի

իրականացնելու համար Հայաստանից ժամանել էին Հ.Մ.-Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ Բագրատ Եսայեանն ու Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի խմբապետ Վիգէն Յովհաննիսեանը, ով ներկայացրեց, որ ներկայ սկաուտներից ընտրուելու են լաւագոյն ուժեր, ովքեր պատրաստակամ են շարունակելու սկաուտական գործունէութիւնը եւ ունեն Առաջնորդի յատկութիւններ: Նրանց հետ տարուելու է աշխատանք՝ ապագայ պատասխանատուներ դաստիարակելու ուղղութեամբ: Սեմինարից յետոյ վերապատրաստուած առաջնորդները իրենց գիտելիքներով ու հմտութիւններով իրենց շուրջը կը համախմբեն հայ պատանիների ու պարմանուհիների՝ ձեւաւորելու համար սկաուտական խմբեր:

## Հ.Մ.Ը.Մ. ՄՈՍԿՈՒԿԱՅԻ ՔԱՌՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ ԲԱՆԱԿՈՒՄԸ



31 Մարտ-3 Ապրիլ 2018, Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի մասնաճիւղին քառօրեայ սեմինար-բանակումը, ուր պատանի սկաուտները ծանօթացան սկաուտական Ա. եւ Բ. կարգի գիտելիքներուն: Սեմինարին ընդհանուր խմբապետն էր քոյր Գոհար Զարդարեան:

Իբրեւ սեմինարի դասախօսներ, Հայաստանէն հրաւիրուած էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Յովհաննիսեան:

10-ից 15 տարեկան լաւագոյն ուժ պապագայ Առաջնորդները չորս օրերի ընթացքում ծանօթացան եւ սովորեցին սկաուտի համար կարեւոր մի շարք հմտութիւններ՝ օդակ ու հանգոյց պատրաստել, սկաուտական կանչեր, ձեռք բերեցին հետախուզական գիտելիքներ: Շատ շուտով նրանց գիտելիքները կը դրսեւորուեն Մայիս ամսին նախատեսուած ճամբար-բանակման ժամանակ: Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի մասնաճիւղի ատենապետ Գէորգ Գասպարեանը տեղեկացրեց, որ Մայիս ամսին Մոսկուայի մասնաճիւղը կազմակերպելու է նոր բանակում, որը կը լինի դաշտային պայմաններում եւ մասնակիցները հնարաւորութիւն կ'ունենան սեմինարի ընթացքում ստացած տեսական գիտելիքներն ամրապնդել գործնականում:

Ապագայ սկաուտ-առաջնորդների քառօրեայ սեմինարն անցավ սկաուտական գիտելիքների, մեթոտաբանութեան, վարժանքների ու կեանքի հմտութիւնների տեսական եւ գործնական ուսուցմամբ: Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկուայի մասնաճիւղի խմբապետ Գոհար Զարդարեանը ներկայացրեց, որ սեմինարի ընթացքում սկաուտները սովորեցին հետախուզական նշաններ, սկաուտական կանչեր եւ խաղեր: Յագեցած օրակարգի կարեւոր մաս էր կազմում նաեւ հայրենասիրական երգն ու պարը: Պատանի սկաուտները խոստովանում են՝ շատ բան ունեն սովորելու, ու շատ բան արդէն հասցրեցին սովորել սեմինարի ընթացքում: Տպաւորութիւնները կիսելու առիթը բաց չեն թողնում Տիանան, Հայկր եւ Սվետան:



սկաուտի ամենամեծ քննութիւնը դա բանակմանը մասնակցելն է ու պատրաստուում են մեծ պատասխանատուութեամբ: Այս տարի Մոսկուայի մասնաճիւղը մասնակցելու է հայրենիքում Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին նուիրուած համահայկական բանակումին: Հայ պատանիների՝ սկաուտական ու ազգային գիտելիքերով միտքն ու մարմինը մարզող սեմինարը լաւ սկիզբ ու ընթացք է Ռուսաստանում հայապահպանութեան կարեւոր գործում: Հ.Մ.Ը.Մ-ի կենտրոնական Վարչութեան անդամ Բագրատ Եսայեանը նշեց, որ ամենակարեւորը, որին հասել է Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկովեան կառույցը, դա նախ երեխաների ոգեւորութիւնը, պատրաստակամութիւնը եւ հետքըրուածութիւնն է շարունակելու իրենց աշխատանքային գործունէութիւնը: Այն վստահութիւն է ներշնչում, խնդիրները, որոնք որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը դրել է իր առջեւ ու իրականացնում է Ռուսաստանում եւ Մոսկուայում, գտնուում է յուսալի ձեռքերում: Քանի որ բոլորն են սկսել գիտակցել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան գործունէութեան եւ ընդհանրապէս սկաուտութեան հայկականութեան կարեւորութիւնը՝ ռուսահայ երտասարդների հայեցի դաստիարակութեան գործում: Նա վստահութիւն յայտնեց, որ մէկ տարւան ընթացքում այս գործընթացում կը լինեն զգալի տեղաշարժեր:

Պատանի սկաուտները ճաշը սկսում են Տէրունական աղօթքով: Կարճ ընդմիջումից յետոյ սկաուտները շփուում են Երեւանից ժամանած աւազ սկաուտների հետ, տեղեկանում առաջիկայ բանակումների մասին, ստանում լրացուցիչ տեղեկութիւններ Հայաստանի ու Արցախի, սկաուտի՝ հայրենիքի նկատմամբ ունեցած պատասխանատուութեան ու հայրենասիրական ոգու մասին: Յագեցած գիտելիքային օրուան աւարտին խարուկահանդէսը սկաուտների համար ամենասպասուածն է: Նրանք երգում են հայրենասիրական երգեր ու կիրառում սովորած կանչերը: Պատանիները գիտեն, որ

**ARMENIA**

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann Athus-Bertrand / Terre vue du ciel. Licence 075 960031. StudioVICKER 7005 PARIS

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ՄԱՍՆԱԾԻՒՂԻ 40-ԱՄԵԱԿԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ



## Գեորգ Պետիկեան ՓԱՍՏԻՆԱ

**Մ**իլիոնաբեան կառույցներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ը կը հանդիսանայ ամէնէն երիտասարդը եւ հայակերտումի աշխատանքին ծառայելու, յանձնառու սերունդներ հայութեա՛մը թրծող ու պատրաստող այն միութիւնը, որ 100 տարիէ ի վեր կը յազեցնէ իրերայաջորդ սերունդներու հոգեկան, ազգային ու բարոյական ծաւալը:

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան

Մ. Նահանգներու մեծ ընտանիքը ակա-նատեսը եղաւ իր մեծագոյն մասնաճիւղերէն՝ Փաստինայի «Ազատամարտ» մասնաճիւղի հիմնադրութեան 40-ամեակի յորելնական տօնախմբութեան, ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որուն ներկայ գտնուեցան թեմի առաջնորդ Սուղեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Փիէր Մանուկեան, շրջանի հոգեւոր հովիւ Պօղոս Քհնյ. Պայթեայեան, Վազգէն Քհնյ. Աթմաճեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի

ներկայացուցիչ Այտա Տիմէճեան, շրջանի Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէի ներկայացուցիչ Արման Պաղտոյեան, «Ազատամարտ» մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի քոյր Անիթա Տէրտէրեան, օրուան մեծարեալներ՝ դոկտ. Սարգիս Կարապետեան, Գէորգ Մանուկեան, Սալբի Լապպատ, Մունիր Հաթթար եւ Պերճ Պետոյեան՝ իրենց հարգատներով, շրջանին մէջ գործող ՀՕՄ-ի, Համազգայինի, Հայ Դատի եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, հիւրեր, բարերարներ եւ աւելի քան 450 Հ.Մ.Ը.Մ.ական երկսեռ երիտասարդներ:

Սրահը, անկասկած, որ տօնական օր մը կ'ապրէր: Սրահին մէջ, երկու մեծ պաստառի վրայ մնայուն կերպով կը ցուցադրուէր մասնաճիւղին յատուկ տեսերիկը:

## ԲԱՅՈՒՄԸ

Աւանդական քրքիչ յի պահէն ետք, ձեռնարկին պաշտօնական բաժինին, ներկաները հրաւիրուեցան յօտնակայ ունկնդրելու Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի բայերդները՝ երգեցողութեամբ Իվանա Գրիգորեանի: Ապա, հանդիսավարներ Սանան Շիրինեան հայերէնով եւ Թալին Գեւոյեան անգլերէնով իրենց արտասանած բացման խօսքերով շնորհակալութիւն յայտ-





նեցին ներկաներուն՝ երեկոյին իրենց զօրակցութեան համար: Այս առիթով, Շիրինեան վկայակոչեց Նիկոլ Աղբալեանի նշանաւոր խօսքը. «Հ.Մ.Ը.Մ-ը ճանչնալու համար պէտք է ազգային գիտակցութիւն ունենալ», եւ ըսաւ. «Այս համոզումով դաստիարակուած ենք բոլորս ու մեր յաջողութիւնը կը պարտինք այս ընտանիքին: Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալը հաճելի կեանքն է: Հոս է որ հայու մաքուր նկարագիր կը կերտուի»: Իր կարգին, Գեւոյեան վեր առնելով միութեան գերազոյն նպատակները՝ շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին մէջ հայ փոքրիկին հայ մնալու կարեւորութիւնը:

**ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԽՕՍԿԸ**

Այնուհետեւ, Առաջնորդը օրհնեց սեղանները եւ իր սրտի խօսքով շնորհաւորեց «Ազատամարտ» մասնաճիւղի ընտանիքին անխոնջ աշխատանքը՝ յարատեւութիւն մաղթելով անոր: «Այս երեկոյ տօնական եւ յաղթանակի օր է, որովհետեւ անգամ մը եւս կը գտնուինք աշխոյժ եւ միշտ եռանդուն այս համայնքին մէջ, իսկ այս անգամ, շրջանի Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէութեան հիմնադրութեան 40-ամեակէն ետք, կը տօնենք Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղին չորս տասնամեակներու հիմնադրութիւնը», ըսաւ Առաջնորդը: Ան նաեւ յիշեց, որ

2018-ը կը նշէ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակը:

«Հարիւր տարի առաջ, եթէ Հայաստանի անկախութիւնն ու Հ.Մ.Ը.Մ-ը չըլլային, այօր ո՞ւր պիտի ըլլայինք», հարց տուաւ Առաջնորդը, ապա ան մեծապէս գնահատեց մասնաճիւղին վարչութեան եւ անդամներուն ներդրումը, միաժամանակ մաղթելով, որ մասնաճիւղը շուտով ունենայ իր սեփական մարզադաշտը:

**ՏԵՍԵՐԻՉԻ ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ**

Յուցադրուեցաւ գեղեցկօրէն պատրաստուած տեսերիզ մը, որ կը ներկայացնէր մասնաճիւղին 40-ամեակին նուիրուած հաստատումներ, մաղթանքներ եւ վկայութիւններ: Յուցադրուած տեսերիզին մէջ կարճ ելոյթներ ունեցան մասնաճիւղին պատասխանատուները: Յուցադրուեցան նաեւ մասնաճիւղին նոր մարզադաշտի ծրագիրին մանրամասնութիւնները: Ուշագրաւ էին նոր խաղավայրին եւ յարակից կազմածներուն ընդհանուր եւ արդիական ձեւով հրամցուած նկարները:

Ապա, յանուն վարչութեան, մասնաճիւղի ատենապետուհի քոյր Անիթա Տէրտէրեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, շնորհաւորեց մասնաճիւղին անդամները այս պատմական իրադարձութեան առիթով եւ շեշտեց, որ մասնաճիւղին յաջողութիւնը կը պարտինք բոլորին անսակարկ նուիրումին եւ ներդրումին:

«Իր հիմնադրութենէն ի վեր մասնաճիւղը հիմնական նկատած է ունենալ իր սեփական կեդրոն-մարզադաշտը, հոն մէկտեղելու համար մեր նոր սերունդի ներկայացուցիչները՝ առողջ միտք, առողջ մարմին կարգախօսով» ըսաւ ան, ապա աւելցուց, որ նոր մարզադաշտի ծրագիրը արդէն իսկ սկսած է առնել իր նախնական քայլերը:

«Նման դաշտ մը մեծապէս պիտի նպաստէ մեր ծրագիրներու իրագործման եւ մանաւանդ՝ գալիք սերունդներու ոգեւորման ճիգերուն»: Իբրեւ ապագայի փայլուն հեռանկար նոր մարզադաշտի մը տէր դառնալու մասնաճիւղի ծրագիրին յայտարարութիւնը մեծ գոհունակութեամբ եւ խանդավառութեամբ ընկալուեցաւ սրահին կողմէ:

**ՅՈՒՇԱՆՈՒՅԻՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ**

Տեղին է նշել, որ վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցած էր պատմական նշանակալից օրուան առիթով հրապարակային կերպով իր երախտագրութիւնն ու շնորհակալութիւնը յայտնել իր երախտաշատ այն անդամներուն, որոնք անցնող տասնամեակներուն անսակարկ զոհարեցած էին յանուն մասնաճիւղի յաջողութեան եւ յարատեւութեան:

Արդարեւ, ատենապետուհին յաջորդաբար բեմ հրաւիրեց միութեան անդամներէն Մուսիկը Հաժժարը, Սայբի Լապպատը, Գէորգ Մանուկեանը, Պերճ



Պետությանը եւ Սարգսի Կարապետեանը, որոնք ստացան յատուկ յուշանուէրներ: Իր կարգին, դուկա Կարապետեան իր սրտի խօսքին մէջ յայտնեց, թէ այս նուէրը կամ պատիւը միայն իրեն չի պատկանիր, այլ՝ բոլորին, որովհետեւ շնորհիւ աջակից նուիրատուներու, բարերարներու եւ քաջալեր հանգիսացողներու փաղանգին, ինք կարողացած է խոնարհաբար եւ օրինակելի կերպով ծառայել իր սիրելի մասնաճիւղին:

Այս առիթով, հրապարակային կերպով իրենց երախտագիտութիւնը յայտնելու համար, ատենապետուհի քոյր Անիթա Տէրտէրեան բեմ հրաւիրեց Գալուստ Շիրտրմեանը (երիցագոյն անդամ), տէր եւ տիկ. Սարգիս եւ Սիմա Կարապետեանները, ժագ Գապասուգեանը, Մանօ Մինասեանը եւ տէր եւ տիկ. Ժողէֆ եւ Հուրի Պաղտատիանները: Տէրտէրեան, իր կարգին, շնորհակալու-







թիւն եւ երախտագիտութիւն յայտնեց ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին, որ ամիսներէ ի վեր ճգնած էր բացառիկ կերպով տօնախմբելու միութեան այս յոբելեանը:

**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ ԵՒ ՓԱԿՈՒՄԸ**

Յանուն Հ.Մ.Ը.Ա. Ս. Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, եղբ. Փիէր Մանուկեան շնորհատրեց մասնաճիւղը՝ պատմական այս

յոբելեանին համար եւ գնահատեց վարչութեան ու մանաւանդ «Ազատամարտ» մասնաճիւղին տարած աշխատանքները, ապա Շրջանային Վարչութեան կողմէ յուշանուէր մը յանձնեց մասնաճիւղին: Յուշանուէրը ստանձնեց ատենապետուհի քոյր Անիթա Տէրտէրեան: Տեղի ունեցաւ աւանդական մոմավառութիւն, որուն մասնակցեցան մեծ թիւով անդամ-անդամուհիներ եւ Հ.Մ.Ը.Ա. Ս. համակիրներ ու քաջալերողներ:

Օրուան կարկանդակին հատուժը կատարեց մասնաճիւղի տարեց անդամ եղբ. Շիրտրմեան: Երեկոն խանդավառեցին երգիչներ Սուրօ, «Տի-Ճէյ. Հարթպիչ» եւ Հայքերդ Լիօ Սարեան, որոնք իրենց ժողովրդական, ազգային եւ յեղափոխական երգերով մինչեւ ուշ գիշեր ստեղծեցին անմոռանալի մթնոլորտ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar

**Europe Hotel**

*Feel at home, away from home...*

**Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

Reservations

Studio/ICEH 2005 PARIS

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



100-ԱՄԵԱԿԻ ԶԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ՇԱՐՔԻՆ ԱՌԱՋԻՆԸ՝

# ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻԲՈՎ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

**Մ**իութեան 100-ամեակի ձեռնարկներու շարքին բացումը կատարելով, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան մամուլի յանձնախումբը 18 Յունուար 2018-ին կազմակերպեց դասախօսական երեկոյ մը, նիւթ ունենալով «Հայոց Յեղասպանութեան



ժամանակաշրջանին նահատակուած հայ մարզիկները եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը», դասախօսին էր հալէպահայ հրապարակագիր, Հայ Ծերանոցի տնօրէն, Սուրիոյ Հայ Սեւ Գօտիներու Ակադեմիայի տնօրէն Աւօ Գաթրճեան:

Դասախօսական երեկոյին բացման խօսքը ներկայացուց եւ հանդիսավարութիւնը կատարեց քոյր Մարինա Զիլ Աբոշեան-Պօղիկեան: Ան մատնանշեց Հ.Մ.Ը.Մ.ի սերնդակերտ դերը՝ վերջին 100 տարուան մեր պատմութեան մէջ:

Այնուհետեւ, դասախօս Աւօ Գաթրճեան ներկայացուց օրուան նիւթը՝ պարզաբանելով Հայոց Յեղասպանութեան ժամանակաշրջանին նահատակուած նշանաւոր հայ մարզիկները,

ինչպէս նաեւ՝ արխիւներու եւ բաժակներու այն մեծ կորուստները, զորս հայ ժողովուրդը 1915-ին ունեցաւ:

Իր դասախօսութեան մէջ, Գաթրճեան լուսարձակի տակ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան պայմանները, յիշելով անոր հիմնադիրները, կանոնագիրը, քայքայը, նշանաբանն ու նշանակը: Ապա, ան իր խօսքը աւելի տպաւորիչ դարձուց արխիւային լուսանկարներու ցուցադրութեամբ:

Դասախօսութեան աւարտին, իր սրտի խօսքը փոխանցեց Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան: Ան ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան 100-ամեակի ձեռնարկներուն շարքը եւ զնահատեց օրուան դասախօսը իր ներկայացուցած



Հասկեկան դասախօսուիթեան համար: Տաթև Ա. ՔՀՆՅ. Հ.Մ.Ը.Մ-ը ներկայացուց, իբրև միշտ երիտասարդ միութիւն, որ կը կերտէ իրերայաջորդ հայ սերունդներ: Դասախօսական երեկոն փակուեցաւ Քահանայ Հօր «Պահպանիչ»ով:

# Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԲԱԾ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

## Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Մամուլի Յանձնախումբ ՀԱՒԵՊ

**Հ**.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս, բարձր հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկառու. Խորհուրդին եւ համագործակցութեամբ Հայկ. մասնաճիւղի Սկառու. Խորհուրդին, 4-7 Մարտ 2018-ին, «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեռն Շանթ» սրահին մէջ տեղի ունեցաւ սկառուական ցուցահանդէս:

Ցուցահանդէսին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 4 Մարտ 2018-ին, երեկոյեան ժամը 5-ին,

ձեռամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի եւ Հայաստանի Հանրապետութեան Հայկ. գլխաւոր հիւպատոս Արմէն Սարգիսեանի, ներկայութեամբ հայկահայ միութիւններու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի անդամներու:

Նախ, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ. մասնաճիւղի շեփորախումբին կատարողու-

թեամբ հնչեցին Սուրիոյ եւ Հայաստանի քայքայները, ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ի քայքայ «Յառաջ նահատակ»-ը: Ներկաները մէկ վայրկեան յոտնկայ լուրթեամբ յարգեցին Հ.Մ.Ը.Մ.ի նահատակներուն յիշատակը: Բացման խօսքը ներկայացուց ցուցահանդէսի յանձնախումբի ատենապետ քոյր Մարալ Գալաթեան-Սէմէրճեան: Ան նշեց, որ Նոյեմբեր 2017-էն, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ընթացք տուած 100-ամեակի 38 ձեռնարկներէն մէկն է սկառուական այս ցուցահանդէսը, որ իրագործուեցաւ յատկապէս այս առիթով յառաջացած յանձնախումբի անդամներուն ջանքերով:

Շարունակելով, քոյրը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի կառուցէն անդին ապրում է, գործելու կամք ու մեր ժողովուրդին աւօրեան իմաստաւորող իրականութիւն»: Ան մեծ հպարտութեամբ ողջունեց յրեւեար միութեան 100-ամեակը, հա-







մահալակական կառույցի ռահվիրաները, սիրելի ժողովուրդը եւ ի մասնաւորի երիտասարդութիւնը, որ կ'ընթանայ նախնիներու նուիրական ուղիով:

Յուցահանդէսին կարեւոր մէկ բաժինը կը ներկայացնէր Սուրբոյ պատերազմին նահատակուած քոյրերու եւ եղբայրներու լուսանկարներն ու իրերը, որոնց կեդրոնը ներկայացուած էր Հ.Մ.Լ.Մ-ի հիմնադիր սերունդէն նահատակ Շաւարշ Քրիսեանի լուսանկարը:

Յուցահանդէսը ընդհանուր բանակումի մը պատկերը կը ներկայացնէր՝ մոտաքին տեղադրուած սկաուտական դուռնէն սկսեալ: Ճակատը կը գտնուէր սկաուտը պատկերող հսկայ կայմը, որուն մէկ կողմը լարուած էր սկաուտական վրանը՝ իր իրերով, սկաուտական պատգարակներով եւ հետախուզական նշաններով: Կայմին միւս կողմը ցուցադրուած էին Սուրբոյ սկաուտական ֆետերասիոնի 7-րդ եւ 8-րդ վաշտերու պետական փաստաթուղթեր եւ գնահատագիրներ:

Տաղաւարները կ'ընդգրկէին պատմական լուսանկարներ, յուշանուէրներ, սկաուտական վկայականներ, փոքր կայմեր, գայլիկարծուիկներու տարազներ, սկաուտական իրեր, պէճեր, պարաններ եւ սկաուտական հրատարակութիւններ:

Սրահը զարդարուած էր սկաուտական պաստառներով եւ սկաուտներու ջանասիրութիւնը արտայայտող ձեռագիրն աշխատանքներով:

Ներկաները շրջեցան ցուցահանդէսին տաղաւարները եւ մեծ հետաքրք-

րութեամբ թարմացուցին Հ.Մ.Լ.Մ-ական իրենց յուշերը:

Յուցահանդէսի ներկաներուն իր սրտի խօսքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան մեծ հպարտութեամբ եւ ուրախութեամբ ողջունեց Հ.Մ.Լ.Մ-ի 100-ամեակը, որ կը զուգարդիպի նախախնամական թոճականի մը՝ 28 Մայիս 1918-ին, երբ մեր ժողովուրդը կերտեց ազատ, անկախ եւ ինքնուրոյն իր պետականութիւնը:

Առաջնորդը 100-ամեակի այս ցուցահանդէսը շատ կարեւոր նկատեց՝ նշելով, որ «Սովորական ու հապճեպով հանրութեան ներկայացուած ցուցահանդէս մը չէ ասիկա, այլ՝ սրահին մէջ ցուցադրուած կը տեսնենք այն բրձախնդրութիւնը, աշխատանքի այն ոգին եւ դասաւորման եղանակը, որոնք կը կազմեն Հ.Մ.Լ.Մ-ի նկարագիրը:

Առաջնորդը նշեց, որ Սուրբոյ տագնապի օրերուն ունեցանք նահատակ գո-

հեր եւ մեր կառույցները ամփոփուեցան իրենց ծառայութեան դաշտէն դուրս համեստ վայրերու մէջ, բայց Հ.Մ.Լ.Մ-ը շարունակեց իր երթը, իր հաւատացած սկզբունքներուն հաւատարմութեամբ շարունակեց դաստիարակչական հրաշալի ծառայութիւնը եւ, արդարօրէն, համահայկական առումով, 100-ամեակին մէջ Սուրբոյ ձայնը լսելի դարձնելը եւ Հ.Մ.Լ.Մ-ի Սուրբոյ մեծ ընտանիքին ներկայութիւնը ապացոյց մըն է մեր յաջողութեան:

Իր խօսքին աւարտին, Առաջնորդը 100-ամեակի մեծագոյն գնահատանքն ու շնորհաւորութիւնները ուղղեց այն բոլոր Հ.Մ.Լ.Մ-ականներուն, որոնք ծառայեցին եւ անցան, կը ծառայեն այսօր եւ պիտի գան նոյն այս երթին ծառայելու:

Բացման հանդիսութեան աւարտին, Հ.Մ.Լ.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան Առաջնորդ Սրբազան Հօր եւ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսին նուիրեց 100-ամեակի յուշանուէրը:

Այս առիթով, Առաջնորդը իր տպաւորութիւններն ու մաղթանքները արձանագրեց Հ.Մ.Լ.Մ-ի յուշամատենին մէջ:

Յայտնենք, որ չորս օրերու ընթացքին ցուցահանդէս այցելեցին հալէպահայ միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, վարժարաններու աշակերտներ եւ Սուրբոյ սկաուտական ֆետերասիոնի վաշտապետներ:





# «ԱՐԵՒԵԼՔ ՄԱՐԶԱՇԽԱՐՀ»ԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԾ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ

**Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային  
Վարչութեան Մամուլի  
Յանձնախումբ  
ՀԱԼԷՊ**

**Հ**.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք.Սարգիսեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ

Շրջանային Վարչութեան մամուլի յանձնախումբը կազմակերպեց «Արեւելք Մարգաշխարհ» մարզական շաբաթաթերթին նուիրուած յուշ-երեկոյ մը՝ Հինգշաբթի, 22 Մարտի երեկոյեան ժամը 7-ին, «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ: Հանդիսութիւնը բացուեցաւ Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի քայլերգներով: Յանձնախումբի ատենա-

պետ քոյր Անի Գալտընեան բացման խօսքով ողջունեց ներկաները եւ յարգանքի խօսք ուղղեց 100-ամեայ միութեան եւ անոր շարքերուն ծառայող Հ.Մ.Ը.Մ.ականներուն: Այնուհետեւ, ցուցադրուեցաւ շաբաթաթերթին մասին տեսերիզ մը (պատրաստութիւն՝ քոյր Նայիրի Ազարիկեան-Արոյեանի):

Թամար Աւետեան-Գատէճեան, Սօսի Քէօրիկեան, Մարինա Զիլ Աբոշեան-Պօղիկեան եւ Գարօյին Քիւրքեան-Արոյեան շաբաթաթերթէն հատուածներ ընթերցեցին, իսկ գայլիկ Արա Արոյեան արտասանեց շաբաթաթերթին մէջ հրատարակուած «Քայլէ՛, գայլիկ»էն հատուած մը:

Այնուհետեւ, հանդիսավար Սեւան Ազարիկեան-Պարմաբարգեան հրաւիրեց օրուան բանախօսը՝ «Գանձասար» շաբաթաթերթի խմբագիր Զարմիկ Զիլ Աբոշեան-Պօղիկեանը:

Յարգելի բանախօսը «Մարգաշխարհ» շաբաթաթերթի հարուստ բովանդակութիւնը ներկայացնելով շեշտեց անոր դերը 1957-1963 տարիներուն՝ Սուրիոյ Հ.Մ.Ը.Մ.ի ծաղկուն կեանքին պատմութիւնը արձանագրելու եւ շահեկան յօդուածներով հայ երիտասարդներուն ցուցմունք տալու իմաստով: Ան դիտել տուաւ, որ «Մարգաշխարհ»ը մարզական սովորական թերթ մը չէր, այլ՝ «Առողջ մարմին, արթուն միտք» կարգախօսին մեկնաբանն էր իր մարզական յուրերով եւ յօդուածներով: Ան էր, որ հայ երիտասարդութեան մարզական համաշխարհային ձեռքբերումներուն անդրադառնալով՝ բարձրանալով բարձրացնելու ուղին յուսարձակի տակ կը բերէր: Պօղիկեան Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուները հրաւիրեց «Գանձասար»ին հետ գործակցաբար զարկ տալու մարզական-սկառուտական յօդուածագիրներ պատրաստելու աշխատանքին:





Գեղարուստական յայտագիրով Եղիա Քիլեճեան մենեթը «Հայրենիք հետ» երգը՝ ոգեւորելով ներկաները: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղր. Մանուկ Քէօզկէրեան արտասանեց Շրջանային Վարչութեան խօսքը՝ կարեւորելով Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ յաղթանակները, մարդական եւ սկսուտական կեանքը արտացոլող «Մարգաշխարհ»ին արժէքը: Ան շնորհակալական խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ տեւաբար նեցուկ կր կանգնի Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ձեռնարկներուն: Շրջանային Վարչութեան կողմէ ան բանախօսին նուիրեց յանձնախումբին հրատարակած «Արեւելք Մարգաշ-

խարհ»ի խմբագրականներուն գիրքը: Աւարտին, Տաթև Ա. Քհնյ. Միքայելեան իր սրտի խօսքը արտասանեց եւ Առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղ-

թուիւնները փոխանցեց: Ան հայ ժողովուրդի կեանքէն պատմութիւն մը ներկայացնելով՝ ժողովուրդի մը անմահացման համար անհրաժեշտ նկատեց գիրք, գրականութիւնը եւ գիրքը: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, մամուլի յանձնախումբին եւ օրուան բանախօսին՝ այս բովանդակայից ձեռնարկին համար:

Հանդիսութիւնը փակեցաւ «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք ներկաները դիտեցին «Արեւելք Մարգաշխարհ»ի սրահին մէջ ցուցադրուած թիւերը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՆՊԻ ՄԱՐԶԱԲԱՆԸ ԱՅՍՕՐ

Հայկաի ագատագրումէն եւ Պոստան Փաշայի շրջանին սուրիական պետութեան հակակշիռին տակ անցնելէն ետք, Կիրակի, 11 Մարտ 2018-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը այցելեց յիշեալ շրջանը գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի մարզաւանը եւ մօտէն սերտեց

կառոյցին ներկայ վիճակը:

Շէնքը եւ Փուլթպոլի դաշտը կրած են նիւթական ծանր փնասներ, սակայն, վերանորոգման յոյսով եւ աշխատանքով, դալիք օրերուն, անոնք կրկին կեանքի պիտի կոչուին, նոր թափ տալով միութեան մարզական կեանքին:





## ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Թղթակից  
ՀԱԼԷՊ



**Կ** ա գ մ ա կ եր -  
պ ու թ ե ա մ ք  
Հ . Մ . Ը . Մ . Ի  
Սուրբիոյ Շրջանային  
Սկառուտ- Խորհուրդին

եւ խմբապետութեան, Կիրակի, 21 Յունուար 2018-ին, Մխիթարեան վարժարանին մէջ տեղի ունեցաւ Վկայ-եալ կարգի դասընթացքին գործնական բաժինը, որուն՝ Հայէպի մասնաճիւղէն իրենց մասնակցու-թիւնը բերին քոյրեր Սեւան Ուրիշիկեան, Մարիա Սա-յէղ, Նաթալի Թաթոսեան եւ Թամար Կէլոյեան:

Դասընթացքի մասնակիցներուն այցելեցին Շրջա-նային Վարչութեան ատենապետն ու անդամները, ինչ-պէս նաեւ՝ Հայէպի մասնաճիւղի Սկառուտ- Խորհուրդի անդամները եւ խմբապետը:

Գործունէութիւնը սկսաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, ապա՝ Շրջանային Սկառուտ- Խորհուրդի ատենապետուհի քոյր Ալին Քիւրիմլեան խօսք առնե-լով յաջողութիւն մաղթեց մասնակիցներուն:

Օրուան առաջին դասախօսն էր Շրջանային խմբա-պետ եղբ. Շղիա Քիլէճեան՝ նիւթ ունենալով «Գայլի-կական եւ սկառուտական արարողութիւնները»: Այս նիւթով մասնակիցները վերլիչեցին իրենց տեսական ու գործնական գիտելիքները եւ ծանօթացան սկառու-տական փոխանցման արարողութիւններուն:

Այնուհետեւ սկսաւ օրուան երկրորդ օրակարգը, երբ մասնակիցները դասարան անցան եւ իւրաքանչիւր քոյր իր կարգին ժողով մը վարեց յատուկ նիւթի մը շուրջ: արծարծուեցան օրակարգի կարգ մը կէտեր եւ հարցեր, որմէ ետք քոյրերը սկառուտական գաւազանի վրայ ձեռային աշխատանք կատարեցին՝ օգտագործե-լով սկառուտական կապերը:

Շրջանային խմբապետուհի քոյր Մովիկ Թէփիրճե-ան կլոր սեղանի շուրջ գրոյց մը վարեց պատանեկան տարիքի հարցերու մասին: Աւարտին, իւրաքանչիւր մասնակից փոխանցեց իր սրտի խօսքը, որմէ ետք Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան մասնակիցներուն բարի երթ մաղթեց սկառուտական շարքերէն ներս:

Գործունէութիւնը փակուեցաւ «Յառաջ նահա-տակ» քայլերգով:



# Ա. ԿԱՐԳԻ ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՄԷՋ

Թղթակից  
ԼԱԹԱՔԻՍ

իրենց մաղթելով յարատև յաջողութիւն եւ արգիւնաւէտ աշխատանք:

**16** Փետրուար 2018-ին, սկաուտական գործունէութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Լաթաքիոյ «Պետրոս Աստրուկի» մասնաճիւղը ունեցաւ աստիճանատուչութիւն՝ Ա. Կարգի եօթը թեկնածուներու- եղբայրներ Յովիկ Սաղտրճեան, Յակոբ Մանուկեան, Յովիկ Մովսէսեան, Մանօ Մանուկեան, քոյրեր Մարիա Գտըլեան, Սինթիա Աստուր եւ Տեսիլ Անթունեան:

Նշեալ քոյրերն ու եղբայրները ստացան Ա. Կարգի վկայական եւ փոխ խմբապետի աստիճան: Գործունէութեան ներկայ գտնուեցան մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդն ու վարչութիւնը:

Աւարտին, մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Գաբրիէլեան վարչութեան անունով շնորհաւորեց աստիճան ստացող քոյրերն ու եղբայրները: Մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդը, իր կարգին, բարձր գնահատեց խմբապետական կազմին աշխատանքը եւ շնորհաւորեց Ա. Կարգ եւ փոխ խմբապետի աստիճան ստացող քոյրերն ու եղբայրները,

## ԵՂԲ. ՄԻՀՐԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ ՎԱՇՏԻ ՎԱՇՏԱՊԵՏ

Դամասկոսի «Աւետիս Ահարոնեան» կեդրոն այցելեց մայրաքաղաքի սկաուտական շարժումի ընդհանուր խմբապետ Պասէմ Շըպաթ, ընկերակցութեամբ՝ Դամասկոսի սկաուտական շարժումի կեդրոնական վարչութեան անդամներուն:

Այցելութեան ընթացքին, Շըպաթ Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Միհրան Ղազարեանը յայտարարեց հինգերորդ վաչտի վաշտապետ եւ անոր յանձնեց փողկապ: Հանդիպումին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղի վարչութիւնը, սկաուտներու աստիճանաւորական կազմը եւ սկաուտներ:

# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՄ ԵՒ ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՈՒՄ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՋ



Թղթակից  
ՎԻԵՆՆԱ

**Շ**աբաթ, 7 Ապրիլ 2018-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Վիեննայի Մեկուսի շրջանը յաջողութիւն մը եւս աւելցուց վերջին երեք տարիներու իր յաջողութիւններուն վրայ: Արդարեւ, մասնաճիւղի վարչութեան, Մխիթարեան միաբանութեան ներկայացուցիչին, ծնողներու եւ հիւրերու ներկայութեամբ տեղի ունեցաւ սկաուտական ցուցահանդէս, խոստման արարողութիւն եւ վկայականաց բաշխում՝ նուիրուած «Հայ սկաուտի օր»ուան եւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին:



Երեկոն ընթացք առաւ աւելի քան 40 արի-արեւոյճներու սրահ տպաւորիչ մոտաքով: Բացման խօսքը արտասանեց եղբ. Յակոբ Սահակեան, որ ի միջի այլոց ըսաւ. «Հայ սկաուտի օրը ծառայութեան, իրերօգնութեան, եղբայրասիրութեան եւ մարդասիրութեան օր է: Հայ սկաուտի օրուան ընդմէջէն կը վստահեցնենք, որ գաղութներու ազգային, կրօնական եւ մշակութային կեանքի զանազան առիթները կը հարստանան, առաւել խորք եւ իմաստ կը ստանան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն ներկայութեամբ եւ մասնակցութեամբ: Այս երեկոն նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան դարադարձին: 100 տարի անցան եւ 100 տարուան փորձառութեամբ կը շարունակենք առաքելութիւնը բոլոր անոնց, որոնք հիմնադիրները եղան կամ անոնց հետ ու անոնցմէ ետք շարունակողները հանդիսացան միութեան վեհ նպատակները իրագործողներուն»:

Նորագիր, Նորընծայ եւ Բ. Կարգի վկայականներ ստացան: Տեղի ունեցաւ նաեւ սկաուտական Փոխ Առաջնորդի աստիճանի տուչութիւն: Խոստման արարողութեան աւարտին, վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Գէորգ Յակոբեան: Ան իր խօսքին մէջ շնորհաւորելէ ետք խոստում կատարած եւ կարգ ու աստիճան ստացած քոյրերն ու եղբայրները շնորհաւորելէ ետք, ան շեշտեց, որ սկաուտական կարգերուն եւ աստիճաններուն տիրանալը նպատակ պէտք չէ ըլլայ, այլ՝ միջոց աւելի սորվելու, գարգանայու, գիտելիքներու մէջ խորանայու, գիտակցութեան եւ գոհողութեան մակարդակները բարձրացնելու եւ ըստ այնմ աւելի ծառայելու: Ապա, ան իր խօսքը ներկայ ծնողներուն եւ հիւրերուն ուղղելով բացատրեց, որ իբրեւ կազմակերպուած հաւաքականութիւն, Վիեննայի հաւաքականութեան գոյատեւման երաշխիքներէն մէ-

կը այս երիտասարդներն են, որոնք ո՛չ միայն հեռուոր ապագային, այլ՝ այսօր իրենց դերն ու կատարելիքը ունին Վիեննայի հայութեան, համայն հայութեան ու Հայաստանի վերելքին եւ յառաջդիմութեան մէջ: Հետեւաբար, անոնց զօրակցիլը, նեցուկ կանգնիլը, ժամանակակից միջոցներով դաստիարակելն ու վստահիլը շատ կարեւոր նկատեց ան:

Երեկոյին պաշտօնական բաժինէն ետք, ներկաները հրաւիրուեցան ըսկաուտներու կողմէ պատրաստուած ցուցահանդէսին ծանօթանալու եւ անոնցմէ յաւելեալ տեղեկութիւններ քաղելու: Ցուցահանդէսին յատուկ տաղաւարներ յատկացուած էին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան, հիմնադիր սերունդի կենսագրութեան, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն եւ ծրագիրներուն, Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ու աշխարհասփիւռ կառույցին ու գործունէութեան, պաշտօնաթերթ «Մարգիկ»ի, արխիւներու եւ իրերու, սկաուտական աշխատանքներու, ինչպէս նաեւ՝ Վիեննայի մասնաճիւղի անցնող 28 տարուան գործունէութեան:

«Հայ սկաուտի օր»-ւան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած երեկոյին միջնորոտը իր ջերմութեան գագաթնակէտին հասաւ սկաուտներու ազգաբնական պարերով:

Ապա, տեղի ունեցաւ նորագիր անդամներու խոստման արարողութիւն: Անոնք խոստացան ծառայել ազգին ու հայրենիքին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից, արի ու վեհանձն մարդիկ: Խոստման արարողութեան յաջորդեց ըսկաուտական կարգերու վկայականաց բաշխում: Շարք մը քոյրեր եւ եղբայրներ սկաուտական



# Հ.Մ.Ը.Մ.Ի «ՊՈՄՊ ԱԹՈՄԻՔ»Ը ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆՑԱԻ ԵՂԲ. ՎԱՐԴԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ՈՉ ԵՒՍ Է

Վ. ԱՄԳԵԱՆ  
Պէյրուք

Կիրակի, 15 Ապրիլ 2018-ին, 93 տարեկան հասակին, Փարիզի մէջ մահացաւ Հ.Մ.Ը.Մ.ական Ֆուլթայոլի «Պոմպ աթոմիք»ը՝ եղբ. Վարդիվառ Յովհաննէսեան, անկրկնելի սերունդի մը վերջին ներկայացուցիչը:

Մարգասէրներ եղբ. Վարդիվառ Յովհաննէսեանը ճանչցած են իբրեւ «Հ.Մ.Ը.Մ.ի Վարդիվառ»: Ու տասնամեակներ շարունակ մեծ եղած է այս երկու բառերուն գուգորդութիւնը: Մէկը միւսը հարստացնող, մէկը միւսը ամբողջացնող, մէկը միւսին համ ու հոտ տուող: Եւ այս բոլորը այնպիսի փայլուն յաջողութիւններով, որոնց մեծ մասը կերտուած է Ֆուլթայոլի դաշտերու վրայ՝ Լիբանանէն Պաղեստին, Սուրիայէն Կիպրոս եւ Թուրքիա:

Եղբ. Վարդիվառ Յովհաննէսեան կը պատկանի 1940-ական տարիներու Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ֆուլթայոլի փառաւոր տասնամեակի կերտած տիտաններու այն սերունդին, որ իւրայատուկ դեր եւ դիմագիծ կու տայ իր միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին, յաղթանակներու բերկրանք եւ ազգային հպարտութիւն պարգեւելով անոր բազմազգար համակիրներուն, ժամանակի մը մէջ, երբ ներազգային մեր կեանքը երկփեղկումի եւ տեղատուութեան տիտը հանգրուան մը կը բոլորէ: Վարդիվառ



եւ իր աննման խմբակիցները՝ Մանուէլ Ալթունեանը, Սաաթճին (Կարապետ Սաաթճեան), Ժորժ Շատարեկեանը, Եղիշէ Մանուկեանը, Տիգրան Արապեանը, Յովհաննէս Նազարեանը եւ Սարգիս Ազնաւուրեանը, ամբողջական նուիրումով, զոհաբերութեամբ եւ յանձնառութեամբ բարձր կը պահեն Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը՝ յաղթանակէ յաղթանակ առաջնորդելով զայն:

Եղբ. Վարդիվառ Յովհաննէսեան կը ծնի 25 Դեկտեմբեր 1925-ին, Պէյրութ: Ան իր նախնական ուսումը կը ստանայ Նորաշէնի Մեսրոպեան վարժարանին եւ Էշրէֆիէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ ճեմարանին մէջ, ուր կը սորվի նաեւ Ֆուլթայոլ խաղալ:

1939-ին, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի սկսողներու «Յառաջ» Ֆուլթայոլի խումբին, որուն կազմին մէջ կը թրծուի իբրեւ տոկուն Ֆուլթայոլիստ: 1941-1952, ան պատուով կը կրէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ֆուլթայոլի ներկայացուցչական խումբին շապիկը, որուն հետ չորս անգամ կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան (1944, 1946, 1948, 1951), երկու անգամ՝ բաժակին (1943, 1948) եւ հինգ անգամ՝ Հ.Մ.Ը.Մ.ի միջ-մասնաճիւղային խաղերու առաջնութեան (1942, 1944, 1948, 1951, 1952): 1945-1952 ան մաս կը կազմէ Լիբանանի Ֆուլթայոլի ազգային խումբին:

1945-ին, դեռ Ֆուլթայոլիստ, Ժողջֆ Նալպանտեանի եւ Յովհաննէս Տէր Յարութիւնեանի հետ, եղբ. Վարդիվառ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ֆուլթայոլի երկրորդական խումբերու կեդրոնական յանձնախումբին եւ հսկայական աշխատանք կը տանի օրուան 16 երկրորդական խումբերէն («Մայր Հայաստան», «Ազատամարտ», «Խնայաստ», «Մուրա», «Քրիստափոր», «Շանթ», «Համագասպ», «Բարգէն Սիւնի»...) ներկայացուցչական խումբին խոստմնալից Ֆուլթայոլիստներ հասցնելու համար:

1951-1952, եղբ. Վարդիվառ Շուէտի մէջ վեց ամիս կը հետեւի Ֆուլթայոլի մարզումի յատուկ դասընթացներու: Լիբանան վերադարձին, «Հ.Մ.Ը.Մ.ի Վարդիվառ» կը դառնայ լիբանանեան Ֆուլթայոլի աստղ, մինչեւ որ դժբախտ պատահար մը կանուխէն վերջ կու տայ Ֆուլթայոլիստի իր կեանքին: Մարտ 1952-ին, հազիւ 27 տարեկանին, ան ընդմիջտ կը հեռա-

**ՄԱՀԱԶԳ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, «Արտակարգ» պատուանշանի արժանացած՝

**ԵՂԲ. ՎԱՐԴԻՎԱՌ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 15 Ապրիլ 2018-ին, Փարիզի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



նայ կանաչ դաշտերէն, երբ եգիպտական խումբի մը դէմ մրցած պահուն, հակառակորդ յետսապահ մը ծանրօրէն կը վիրաւորէ իր կրօնկը:

Այնուհետեւ, եղբ. Վարդիվառ կ'անցնի վարչական աշխատանքի: Ան յաճախ կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ եւ Լիբանանի Պատգամաւորական Ժողովներուն: 1953-ին, մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան, իսկ 1971-1973՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

1995-ին եւ 1999-ին, ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Զ. եւ Է. Պատգամաւորական Ժողովներուն: Է. Պատգամաւորական Ժողովի նախօրեակին, 31 Մարտ 1999-ին, միութենական իր երկարամեայ ծառայութիւններուն առ ի գնահատանք՝ ան կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արտակարգ» պատուանշանին:

Հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, եղբ. Վարդիվառ եղած է նաեւ նուիրեալ Դաշնակցական մը: 1947-ին, Կարօ Սասունիի կնքահայրութեամբ, ան մուտք կը գործէ Հ.Յ.Դաշնակցութեան շարքեր եւ մինչեւ մահ կը մնայ «անկեղծ գինուորը» իր ժողովուրդին եւ անոր արդար դատին: 1960-ական տարիներուն, շրջան մը, ան մաս կը կազմէ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին: 1964-ին, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ, ան մաս կը կազմէ Պուրճ Համուտի քաղաքապետարանի մարզադաշտի շինութեան գործադիր յանձնախումբին:

Եղբ. Վարդիվառ 1989-ին կը հաստատուի Փարիզ, ուր մաս

կը կազմէ տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին: Ան ամուսնացած է եւ ունի 2 մանչ եւ 2 աղջիկ:

2000 թուականին, եղբ. Վարդիվառ լոյս կ'ընծայէ Հ.Մ.Ը.Մ.ական Ֆուլթայոյիստի իր օրագրութիւններն ու տպաւորութիւնները ներկայացնող «Յուշեր Հ.Մ.Ը.Մ.ականի կեանքէս 1940-1952» հատորը: Գիրքը պատմական-գաստիարակչական խորք ու արժէք ունեցող յուշագրութիւնն է Ֆուլթայոյիստի մը, որուն յանձնառութիւնն ու նուիրումը անսակարկելի եղած է Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթին եւ իբրանանեան Ֆուլթայոյի պատմութեան: Գիրքը յուզումով, հիացումով եւ պարծանքով կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթայոյի 170 խաղերու մասին ծանօթութիւններ եւ յիշարժան 60 խաղերու մասին մանրամասն տեղեկութիւններ:

Եղբ. Վարդիվառի անդարձ մեկնումով վերջնականապէս պատմութեան կ'անցնի սերունդ մը, որուն մարզական յաղթանակներով մեր ժողովուրդը փաստը տուաւ ճակատագրին դէմ իր յաղթանակին, նոր կեանք եւ նոր հորիզոն կերտելու իր ձգտումին: Այսուհետեւ, եղբ. Վարդիվառի եւ իր սերունդի անգուգական տղոց պատմութիւնը միայն զայն կերտողներուն սեփականութիւնը չէ, այլ՝ այդ պատմութիւնը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, համակիրներուն եւ համայն հայութեան, որոնք այսօր այնքա՛ն կարիքը ունին դաշտերու վրայ գիրենց ուրախացնող, խանդավառող եւ հպարտացնող նո՛ր Վարդիվառներու:

with the complements of

# Restaurant Al-Mayass

# ԵՂԲ. ՅԱԿՈՒ ՀԱՄԱՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



## Յակոբ Բեշիշեան ՊԵՅՐՈՒԹ

**Տ**երեւաթափ է դարձեալ: Հարազատ ու սիրելի դէմքեր մէկիկ-մէկիկ կը հեռանան մեզմէ:

Այս անգամ եղբ. Յակոբ Համամճեանն էր հրաժեշտ տուողը՝ Գանատայէն, ուր լուռ ու մունջ իր հոգին կ'աւանդէր, առանց «մնաք բարով» ըսելու մեզի:

Ան անվերադարձ կը բաժնուէր մեզմէ, իր ետին ձգելով վիշտ ու յուզում, խոր սուգի մատնելով իր ընտանիքը, հարազատները, ծանօթներն ու բարեկամները:

Իր մահով կը կորսնցնենք արուեստագէտ ու տիպար հայ մը եւ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ երկար տարիներ իր ներդրումը ունեցած է միութեան վերելքին ու ծաղկումին:

Եղբ. Յակոբ Համամճեան ծնած է 1932-ին, Հայաստան:

Նախնական ուսումը Սէն Կրէկոսար ճեմարանին մէջ ստանալէ ետք, ան կը նետուի կեանքի ասպարէզ՝ ոսկերչութեան, եւ կարճ ժամանակի մէջ, ինքնաշխատութեամբ կը տիրանայ արհեստի բոլոր գաղտնիքներուն՝ արհեստը վերածելով արուեստի ու դառնալով փնտռուած ոսկերիչ մը:

Եղբ. Յակոբ Համամճեան 40 տարիներ վարած է Լիբանանի ոսկերիչներու սենտիքայի ատենապետի պաշտօնը: 2004-ին ան «Վարպետ» կոչումը ստացած է Հայ Ոսկերիչներու Միութեան կողմէ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Խորէն Ա. եւ Գարեգին Բ. Կաթողիկոսները օրին իրեն վստահած են կաթողիկոսութեան յուշանուէրներն ու շքանշանները պատրաստելու աշխատանքը:

Եղբ. Յակոբ Համամճեան Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ունեցած է բեղուն գործունէութիւն: Փոքր տարիքէն ան մաս կազմած է միութեան սկաուտական շարքերուն՝ ըլլալով գայլիկ, արի եւ երէց:

Սկաուտութեան մէջ իր արձանագրած փայլուն գործունէութեան շնորհիւ, ան կը նշանակուի նախ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուտի մասնաճիւղի եւ ապա՝ Շրջանային մակարդակով խմբապետ:

Մարզական կեանքն ու սկաուտութիւնը իր անբաժան առօրեան ըլլալով, եղբ. Համամճեան 1960-ական տարիներուն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթի խումբին՝ մասնակցելով միջ-մասնաճիւղային խաղերու: Ան հիմնադիր անդամ կը հանդիսանայ «Միփան» դահուկարչաւի միութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ իրբեւ սկաուտ եւ մարզիկ գործելէ ետք, եղբ. Համամճեան 1962-ին կը լծուի վարչական գործունէութեան: Երկար տարիներ ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուտի մասնաճիւղի իրերայաջորդ Սկաուտական Խորհուրդին:

րու, յանձնախումբերու եւ վարչութիւններու, ապա կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ:

Իրբեւ գնահատանք տարիներու իր վաստակին, եղբ. Համամճեան 1986-ին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ կ'արժանանայ «Ծառայութեան» շքանշանին, իսկ աւելի ուշ՝ 2014-ին, ան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը պարգևատրուի միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Յակոբ Համամճեան եղած է տիպար հայր: Ան ընտանեկան իր օճախը կազմած է Աշխէն Պէօյլիքեանի հետ եւ բախտաւորուած է երկու զաւակով:

Եղբ. Համամճեան իր բոլորանուէր մասնակցութիւնը բերած է լիբանանահայ ազգային-կրթական գործին, գործելով Ազգային Թորգոմեան եւ Զաթալպաշեան վարժարաններու խնամակալ մարմիններուն մէջ:

Մինչեւ իր կեանքին վերջին օրերը ան Գանատայէն կը հետեւէր Հայաստանն ու հայրութիւնը հետաքրքրող լուրերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական խումբերուն արձանագրած արդիւնքներուն:

Եղբ. Յակոբ Համամճեան մահացաւ 7 Նոյեմբեր 2017-ին եւ հողին յանձնուեցաւ Գանատայի մէջ, իրեն սիրելի հայրենիքէն եւ Լիբանանէն տասնեակ հազարաւոր մղոններ հեռու:

Հայու ճակատագիր:

Աստուած միայն գիտէ, թէ հայը ո՛ր պիտի ծնի, ո՛ր պիտի ապրի եւ ո՛ր պիտի թաղուի:

Սիրելի մը կորուստին անսպասելի գոյժը մեզ կը ստիպէ, որ անցեալի քաղցր յիշատակները արթուն պահենք մեր մէջ եւ տարիներ քանի մը վայրկեանի մէջ տողանցեն մեր յիշողութեան պաստառին վրան:

Վարձքդ կատա՛ր, սիրելի՛ եղբ. Յակոբ:

## ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝

### ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՕՅԻՔԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 9 Մայիս 2018-ին, Գանատայի մէջ:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ...

### 100-ԱՄԵԱԿԻ ՉԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Մամլոյ ասուլիսին զլիսաւոր մասը յատկաց-ւեցաւ այս ամառ Հայաստանի մէջ մախատեսուած միութեան 100-ամեակի ձեռնարկներուն: Այս մասին խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ.



Գառնիկ Սկրտիչեան: Ան ըսաւ, որ 19-29 Յուլիսին Հայաստանի մէջ տեղի ունենալիք զանազան մախաձեռնութիւնները կը վայելեն Հայաստանի մախազահին մախազահութիւնը եւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսներուն հովանաւորութիւնը:

Եղբ. Սկրտիչեան նկատել տուաւ, որ 100-ամեակի ձեռնարկները ընթացք պիտի առնեն համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ ընդհանուր քանակումի քացման հանդիսաւոր արարողութեամբ, Բիւրականի մէջ, 1100 սկաւառներու մասնակցութեամբ: Պատմական այս քանակումին ներկայ ըլլալու առիթ եւ կարելիութիւն պիտի ունենան այն բոլոր հայորդիները, որոնք այդ թուականներուն 100-ամեակի մախաձեռնութիւններուն մասնակցելու համար հայրենիք պիտի գտնուին: Նոյն օրը, Բիւրականի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ 110 մասնաճիւղերու անունով քացումը պիտի կատարուի յուշաքանդակի մը, որ կրկնօրինակն է միութեան 90-ամեակին առիթով Տէր Զօրի մէջ տեղադրուած յուշաքանդակին:

20 Յուլիսը պիտի ըլլայ խորհրդանշական օր մը, որովհետեւ այդ օր 100-ամեայ միութեան դրօշակը պիտի ծածանի Հայոց Տեղասպանութեան նահատակներուն յիշատակը անմահացնող Ծիծեռնակաբերդի մէջ, ուր պիտի կատարուի նաեւ ջահաւառութիւն՝ Փարիզէն (Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանի գերեզմանէն), Պոլիսէն (Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Յովհաննէս Հիմողեանի գերեզմանէն) եւ Անթիլիասէն (Եղեռնի նահատակաց մատուէն)՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեամբ բոցավառած եւ հայրենիք հասած ջահերու միացումով:

Այնուհետեւ պիտի կատարուի ծառատնկում՝ միեւնոյն վայրերէն բերուած հողերու միախառնումով: Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանին մէջ պահուած կարեւոր եւ պատմական իրեր այս առիթով պիտի փոխադրուին Երեւան՝ Տեղասպանութեան թանգարան, ուր յատուկ ցուցադրութեան պիտի արժանանան անոնք:

Շարունակելով, եղբ. Գառնիկ Սկրտիչեան ըսաւ, որ 21 Յուլիսին քացումը պիտի կատարուի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնի մուտքին զետեղուելիք միութեան հիմնադիրնե-

րու քանդակներուն: Ապա, Երեւանի փողոցները պիտի թնդան մեծաթիւ ըսկաւառներու խրոխտ տողանցքով: Տողանցողները պիտի համախմբուին «Հանրապետութեան» հրապարակ, ուր պիտի կատարուի հանդիսաւոր արարողութիւն:

22 Յուլիսին, ննջեցեալներու եւ նահատակ Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին հոգեհանգստե-

ան արարողութիւն պիտի կատարուի Եռաբլուրի մէջ: Յաջորդ օրը յատուկ փոխադրակառքեր 100-ամեակի մախաձեռնութիւններուն մասնակիցները պիտի փոխադրեն Կիւմրի, ուր հրապարակին մօտակայքը՝ եկեղեցւոյ կից, Հեղմար արքիւրի կողքին, քացումը պիտի կատարուի հայ մարմնակրթական շարժումի նուիրեալ գործիչներէն, Կիւմրիի մէջ որբախրնամի աշխատանք կատարած եւ որբերէն սկաւառներ պատրաստած նահատակ Վահան Չերազի արձանին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը նաեւ տեղեկացուց, որ 24 Յուլիսին, Օփերայի դահլիճին մէջ մեծ շուքով տեղի պիտի ունենայ 100-ամեակի հանրային պաշտօնական հանդիսութիւնը, իսկ 25 Յուլիսին կատարութեան շէնքին մէջ պիտի կատարուի գիտաժողով, որուն պիտի մասնակցին Հայաստանէն եւ Սփիւռքէն մտաւորականներ ու մասնագէտներ:

Յաջորդ օր տեղի պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած դրօշմաթուղթերու շնորհահանդէսը, ինչպէս նաեւ՝ մախկին խմբապետներու հաւաք եւ խարուկահանդէս՝ Բիւրականի մէջ:

28 Յուլիսին, Ծիծեռնակաբերդի մէջ դրօշակները վար պիտի առնուին՝ ազդանշանը տալով միութեան 100-ամեակի մախաձեռնութիւններուն փակման: Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը պիտի յանձնուի Տեղասպանութեան թանգարան, իսկ Եռագոյն դրօշը թանգարանին կողմէ պիտի տրուի Հ.Մ.Ը.Մ.ին: Նոյն օրը տեղի պիտի ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ քանակումի պաշտօնական փակումը, իսկ յաջորդ օր՝ «Փարաուն» ճաշարանին մէջ հանրային փակման ճաշկերոյթը:

### 100-ԱՄԵԱԿԻ ԵՐԳԻ ՏԵՍԱՆԻԹԻ ՅՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ

Մամլոյ ասուլիսի աւարտին, ներկայները դիտեցին Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած երգին տեսանիւթը: Յայտնենք, որ երգի բառերուն հեղինակն է եղբ. Ներսէս Լիսյարեան, երաժշտական յօրհնումը կատարած է Վահրամ Էմմիեան, իսկ մեկնաբանութիւնը՝ Գառնիկ Մարգիսեան (<https://www.homenetmen.org/hy/centennial-anthem>):

